

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԵՂԲ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՐԳԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆՆԵՐԻ

ՎԱՐՔԱԳՐՈՒԹԻՒՆ

Աղա Կարապետ Մարգարեան
ՀԱՅԱՐԱՊԵՏԵԱՆԻ



Աշխատասիրեց լուսահոգույ բարեկամներէն մեկը.

* * *



9/47.925/

Կ-34

НАХИЧЕВАНЬ հ-դ.
Тип. С. Я. Авакова. || Տ.-ՆԱԽԻՉԵՎԱՆ
Տպ. Ս. Յ. Ավակով. 1913

գ. Ճայինչել Օշումուք 15 OCT 2011

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՂԲ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՐԳԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆՆԵՐԻԿ.

9(47925)

Վ-34

ԿՄ

ՎԱՐՔԱԳՐՈՒԹԻՒՆ

Աղա Կարապետ Մարգարեան
ՀԱՅԱՐԱՊԵՏԵԱՆԻ

1005
91498

Ծ



Աշխատասիրեց լուսահոգոյ բարեկամներէն մէկը.

* * *



НАХИЧЕВАНЬ Ա-Դ.
Тип. С. Я. Авакова.

|| Ն.-ՆԱԽԻՉԵՎԱՆ
|| Տպ. Ս. Յ. Ավակով. 1913

1913

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ:

Նոր-Նախիջևանի հասարակական կեանքի մէջ այս
տարի տեղի ունեցաւ մի դէպը, որ բոլոր Նախիջևանցինե-
րուն յիշել տուեց անցած գնացած տարիները ու անոնց
հետ կապուած գործերը:

Հայազգի աղքատախնամ Եկեղեցական Հոգաբարձու-
թիւնը իւր վաղեմի սաներէն մէկին՝ բուսագիտութեան
դոքառը պ. Յովակիմ Ղազարոսեան Բեղելնակին ուղարկեց
Հնդկաստան Կալկաթայ, որ նա այնտեղ Բարձրագոյն Դա-
տաստանի միջոցով փոխէ 1861 թուականի Բէնգալական
դատաստանի վճիռը, որ կը վերաբերի Կալկաթայի Մասեն
Բաբեաջանի Նախիջևանի հայ հասարակութեան օգտին թո-
ղուցած ժառանգութեան:

Կալկաթացի հայազգի Մասեն Բաբեաջանը՝ 1794 թուա-
կանի գրած կտակով թողուցած էր Նոր-Նախիջևանի Բարե,
գործական հիմնարկութիւնների համար մէկ ժառանգութիւն-
որը պէտքէ օրինական ճանապարհով Կալկաթայի դատաստա-
նական Ատեանի միջոցով հաստատուէր: Անգլիական օրէն-
քով հթէ կտակը կատարուելէն ետքը՝ անցած լինէր 75 տա-
րի և ժառանգները ըլպահանջէին իրանց թողուցած ժառան-
գութիւնը, բոլոր գումարները, ամբողջ ժառանգութիւնը
կանցնէր տէրութեան: Կտակը զրուելէն յետոյ անցել էր
65 տարի և Նախիջևանցիք Կարողացած չէին ոչ մէկ քայլ
անել այդ ժառանգութիւնը դատաստանով ամրացնելու:
Եւ ահա Կարապետ Հայրապետեան՝ իւր քաղաքագլխու-
թեան օրով բարձրացուց այդ Կալկաթացի Մասեն Բաբե-
աջանի ժառանգութեան հարցը և եղաւ մէկը՝ Նախիջևանցի
Միքայէլ Նալբանդեան, յայտնի հրապարակախօս, գիտնա-
կան և բանաստեղծ, յանձն առաւ երթալ Հնդկաստան և
ժառանգութեան գործը գլուխ բերել: 1861 թուին գնաց
Մ. Նալբանդեանը Հնդկաստան Կալկաթայ և Սեպտեմբերի

26-ի դատաստանական վճռով ստացաւ կուտակուած փողերը
և հաստատեց Նոր-Նախիջեանցիների ժառանգական իրաւունքները:


Այդ օրէն անցել էր ամբողջ կէս դար և երկու տարի,
ինչպէս վերը ասուեցաւ, Մասեն Բարաջանի գործի համար
ուղարկուեցաւ Եկեղեցական Հոգաբարձութեան կողմէն լիազօր Յ. Բեդելեանը Կալկաթայ, այս զաղափարների յարակցութեան հիման վրայ յիշուեցաւ և խօսուեցաւ շատ անգամ
և շատ տեղ Միքայէլ Նալբանդեանի Հնադկաստան գնալու
մասին Կարապետ աղա Հայրապետեանի քաղաքագլխութեան
օրով:

Մեր հանգուցիալ հօր զբքերի առխիվում գտնելով
նրա բարեկամներից մէկի ձեռքով գրուած այս կենսարկութիւնը՝ յանձնում ենք տպագրութեան, կարծելով որ ներկայ
տարին և ժամանակը ամենայարմարաւորն է վերյիշելու
հրապարակում շրջող զաղափարներն և յիշողութիւններն էնադում ենք որ զբքիս հեղինակ-մեր հօր բարեկամներից
մէկը-պէտք է եղած լինի Տ. Գագրիէլ ա. քահանայ Պատշաճանցը:

Գրքիս վերջին իբրեյաւելուած՝ տալիս ենք հանգուցեալի
ծառայութեան ցուցակը, նրա անուամբ ստացուած բարձրա-
գոյն թղթերը և Գեր. Գր. Եպիսկոպոս Աղափիրեանի քարոզը
տարելիցի տոիթով ասուած:

Բացի վերյիշեալ հանգամանքներէն, կը կարծենք որ
սա կարող է ծառայել իբրև հում նիւթ Նոր-Նախիջեանի
ուսումնասիրութեան համար, մի փոքրիկ թեթևութիւն՝ քա-
ղաքիս և քաղաքացիներու անցեալը ուսումնասիրող անձանց
համար:

Յ. Եւ Մ. Հ-ը:



Կ Ա Ր Ա Պ Ե Տ Մ Ա Ր Գ Ա Ր Ե Ա Ն Ի
ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆՑ

Ք Ա Ղ Ա Բ Ա Գ Լ Ո Ւ Խ Ն Ո Ր Ն Ա Խ Ի Զ Ե Խ Ս Ւ Խ

1860—1867.



Բազմահոյլ եւրոպական ազգաց մէջ, ուր որ ժողովուրդը միլիոնաւոր քանակօք կը հաշուի, հազիւ կը յաջողին գարերը երկնել և ծնանիլ մի այնպիսի անձն, որ իր ժամանակցաց մէջ լինի երեւի՝ և իւրաքանչիւր ազգ բարեբաստիկ կը համարուի, եթէ ամեն հարիւրամեկաց մէջ ունենայ մի մի հատ այսպիսի անձինք:

Զարմանք չէ, եթէ մեր սակաւաթիւ ազգի մէջ այդպիսի անձն հազուագիւտ լինի, որովհետեւ մեր ազգն, ուր և կը գտնուի այժմ դարերով հնացած այն երկրացի չէ, այլ ժամանակի հողմակոծութեամբ վարեալ մի սերմ է, որ եկել ընկել է գիպուածով այնտեղ, արմատացել է, ծառ է գարձել, օտար երկնագտառի տակ և օտար հողի վերայ: Այդ աւելի անկոտակած կարող ենք ասել յայս կոյս—կովկասեան հայաբնակ քաղաքացը և մանաւանդ Նոր-Նախիջևանայ վերայ, որ գեռ իւր հիմնարկութեան հարիւրամեկը չէ լրացուցել, նորա մէջ եւրոպական քաղաքակրթութիւնը գեռ նոր է մուտ գտել, նորա բնակիչը դեռ իւրեանց նահապետական ծէսերն ու սովորութիւնները պահած ունին՝ լինչակս նախնեաց թողած տւանդ իւր մաքուր պարզութեամբ:

Եթէ այդպիսի նորատունկ պարտիզի մէջ տեսնուի մի այնպիսի ծառ, որ իւր կարգի մէջ դարացած ծառերէն թէ հասակաւ, թէ սաղարթիւք և թէ զովարար ստուերաւ և թէ անուշահամ պտղովք լինի գերազանցած, իրաւի նկատելոյ արժանի գիպուածք պիտի համարուի, և երբ նորա արտաքինն դարձու-

ցանէ աճոցաւորի վերայ աչքելն, նորա ներքինն պիտի պատաղեցուցանէ նորա միտքն ու խորհուրդն:

Նոր-Նախիջևանայ Աստուածատունկ գրախոփ մէջ, որ նախախնամութեան աջն Տաւրիկեան թերակըզիէն առաւ ու փոխադրեց Դոնաւիսեան գետափունքը գեռ ևս 1779 թուին, այդպիսի մէկ բարեբեր և բեղմաւոր ծառ եղաւ Հայրապետեանց աստուածապահ տունն, որ այս փոքրիկ հայաբնակ քաղաքի համար եղաւ պարծանաց տեղի և նորա հայագի բնակչաց համար՝ բազմադիմի մխիթարութեանց ապահովայր:

Հայրապետեանց մականունը մատնցոյց է լինում իր ծագման աղբերական և միշտ ակնարկութիւն է անում այն անձկալի վայրաց, ուստի այս գերդաստանի արմատն է յառաջ բղխել՝ և որ աւելի չքնաղ և սիրալին է այս վերդաստանի սրտեռանդ մտերմութիւնը առ Սրբազն Հայրապետս ազգիս և առ սուրբ Գանձ հայրապետական. հանգիսապէս ստուգում է, որ ոչ այս մականուն ողարգեողն է զուրկ եղել՝ ի հոգեշունչ շնորհաց և ոչ ստացող և նորա աստուածազօր սերունդն է շեղել իւր նախնեաց առաքինազարդ ճանանպարհէն:

Դեռ նոր էր Սուրբ Աթոռն Սպահանէն վերադարձել՝ ի բնիկ տեղին իւր Սուրբ Էջմիածինն և նոր էր Վաղարշապատ մայրաքաղաքն իւր բազմադարեան աւերակաց տակէն Փիւնիկի նման դուրս գալով՝ ձեւացել մէկ փոքրիկ գիւղ հայաբնակ, որ մէկ Վաղարշապատցի հայ, ջերմեռանդ ծառայութեամբ այնքան հաճոյացաւ ազգաշէն և ազգասէր Մովսէս Կաթողիկոսին, որ նա պարզեց այն հայուն Հայրապետեան մականունը: Եւ յիրաւի, այնունեաւ 1630-էն մինչ 1722 թիւն Հայրապետեանց տունն Վաղարշապատի մէջ էր Սուրբ

Էջմիածնի հայրապետաց և սրբազն միաբանութեան սփոփարան:

Այլ այս 1722-ին երբ լսուեցաւ թէ Դաւիթ Բէդ Սիւնի ազգասէր քաջ իշխանն սկսել է Հայաստանի փրկութեան համար գէն առնուլ և բազումք յամենայն կողմանց հաւաքւում են նորա գրօշակի տակ, Հայրապետեան տանէն մէկ երիտասարդ, Մկրտում անուն, վարեալ հրով ազգասէրութեան, թողեց իւր մայրենի տեղն և եկաւ Դաւիթ Բէգի զօրաց մէջ մըտաւ, և վասն Հայոց ազգի և հայրենեայ ազատութեան, առաջ Դաւիթ Բէգի և ապա նորա քաջ սպարապետի Մխիթարայ զօրավարութեան ներբոյ պատերազմեցաւ Պարսից բռնաւորաց գէմ մինչ 1730 թիւն: Այլ այս 1730 թուին, երբ դաւաճանութեամբ ումանց ներքին թշնամեաց սպանուեցաւ Մխիթար և նորա զօրքն ցրուեցաւ անտէր՝ մնալով, և Մկրտում Հայրապետեանն, որ Դաւիթ Բէգի զօրաց մէջ բարի համբաւ էր ստացել իւր քաջութեամբ, որովհետեւ շատ պատերազմ էր մղել Պարսից գէմ, տեսաւ որ իւր վերադառնախ ՚ի Վաղարշապատ այսուհետեւ անհնար է, յերկիւղէ վրէժինոգրութեան Պարսից և զուցէ նորա պատճառաւ Սուրբ Էջմիածնին վկաս հասնի, գնաց Ղըմու կողմերը, ուր և ամուսնացաւ, և այս ամուսնութենէն ծնաւ որդի, որ ՚ի յիշատակ իւր նախնեաց բարեկամ հայրապետաց, կոչեց անունն Հայրապետ, Մկրտումն վախճանեցաւ 1750 թուին:

Հայրապետն Մկրտումեան Հայրապետեան, երբ բնակիչք Տաւրիկեան քաղաքաց կամեցան գաղթիլ այն տեղէն գէպի խորին Ռուսաստան, նոցա հետ միտսին գուրս եկաւ Ղըմու թերակղիէն և 1779 թուին Նոր-Նախիջևանայ հիմնարկութեան ժամանակն ըլուակուեցաւ այս նորաշէն քաղաքի մէջ: Ոչ հայելով

նորա բարեպաշտ և երկիւղած բարուց և վարուց,
բաղդի անիւը մինչև վերջը սկսաւ ընդդէմ սորա զառ-
նալ, այնպէս որ՝ այս քաջազնեայ Հայրապետը սկսաւ
այլոց պարտիզի մէջ պարտիզպանական կեանք վարել^{*)}
և այն իսկ վիճակի մէջ հասաւ նորա կենաց վախ-
ճանն, որ թողնելով իւր այրի կինն նոյեմզար և
միամօր որդին Մարգար զնաց հանգչիլ իւր նախ-
նեաց կարգումն:

Բայց Մարգար պատանւոյ գործերն իւր հօր
գործերուն նման ձախող չի գնացին: Սա իւր հօր,
հանգուցեալ Հայրապետ Մկրտումեան Հայրապետեանի
հողագործութիւնն և պարտիզպանութիւնն միայն ժա-
մանակի անպտուղ կորուստ ճանաչելով՝ Հայոց ազգի
վաստակաւորութեան միւս ձիւղն ընտրեց:

Մեր ազգի հնագոյն հախնիք առաջ խաշնարած
էին, քանի որ թափառական կեանք էին վարում.
Երբ որ գտան իրանց համար հայրենիք ու երկրի
վրայ ամրացան, սկսան իւրեանց խաշնադարման կե-
նաց հետ գուգաւորիլ և երկրագործութիւնն: Շատ
դարեր Հայաստան շտեմարան էր հացի բազում շրջա-
կայ ազգաց համար և նոցա ձիեանց երամակներն
ամեն տեղ հոչակած: Երբ զրկուեցան հացատու
հողէն, երբ իւրեանց ձեռքի սուրը հարկադրեցան
դէն ձգել, իւրեանց երկրագործական խոփին ու պա-
տերազմական սուսերն խորտակեցին Հայք և անտի
շինեցին վաճառականութեան կանգուն ու կշիռ: Ահա
այս ազգային վաստակաւորութեան երկրորդ նոր ճա-
նապարհ ընտրելով՝ Մարգար պատանին պանդխտե-
ցաւ նառուր, ուր երկարատե առեսրական գործոց

^{*)} Բաղդի բերմամբ, նոյն պարտէզը ևնոյն այգին ևոյն իսկ այն պա-
րոնի կարուածքը, յետ ժամանակաց լուսահոգի Կարապետ Հայրապետեանն,
մեծ գումար գնարելով իւր գերգաստանի սեպհանութիւն զարձուց:

պարապելով՝ այնքան յառաջացաւ, մինչև իւր Հայ-
րապետեան մականուան վրայ, ստացաւ նաև նառուր-
ցի նոր մականուն:

Մինչ սա իւր պանդխտութեան մէջ մթերում էր
այն ճոխութիւնն, որ ժամանակաւ պիտի նորա գեր-
դաստանի անունն շտատ տեղեր տարածէր, նորա մայրն,
այսինքն Հայրապետի այլին՝ Նոր-Նախիջևանայ մէջ
ունէր աստուածապարզե ապրուստ, թէ իւր հանգու-
ցեալ ամուսնոյ աշխատանքէն մնայած, և թէ իւր
ժրագլուխ տանտիկնութեան շնորհօք, ունելով բը-
ժշկական գործէից ծանօթութիւն՝ հասարակաց մայր
էր և բազում հիւանդաց և վշտացելոց ապաւէն և
ապաստանի: Բայց սրա ճակատագիրն այնպէս էր, որ
որքան իւր ամուսնոյ հետ կհնակցութեան ժամանակն
ունենար նեղութեան և անձկութեան կեանք, այնքան
իւր որդոյ ժամանակն պիտի վայելէր նախանձելի
երջանիկ օրեր: Իւր բարեսիրտ բազգրաբարոյութեամբ
և աչալուրջ զդաստութեամբ ձեռամբածեալ ընտրեց
իւր միակ որդոյ համար մի այնպիսի օրիարդ յրն-
կերութիւն կենաց նորա, որ արդարե արդարացուց
այն զգօն այրոյ ընտրութիւնը: Երբ „Նաւուրցի“
Մարգար Հայրապետեան Հայրապետեանցն եկաւ նոր-
Նախիջևան՝ գնեց սուրբ Լուսաւորչի հարաւային կող-
մըն, որդոստայի վրայ, յանդիման Խաթրանեանի
վաճառանոցին մի լաւ քարաշէն մեծ տուն, որ
սեպհականութիւն էր Մելքոն Շիարեանի, և այնտեղ
հարս բերելով ծնողի ընտրած օրիորդն՝ Հեղինէ Բազ-
տասարեան կէօղկէրմէզեան կամ Զոլախեան՝ ամուս-
նացաւ և ստացաւ երկու որդի, մինն Կարապետ և
միւսն Մկրտիչ:

Մարգարն չունելով մնապարծ ընտրութիւն,
թէսլէտ իւր ճոխութիւնն չէր ցոյց տալիս մեծ մեծ

դոներ բանալով և շուայլ կեանք վարելով, բայց որովհետեւ իւր գերզաստանական կեանքն ունէր լիութեան ամենայն առհաւատչեայքն և նրա կինն Խաթուն Հեղինէն այնպէս կենցաղավարութեան հմուտ էր, երբ նորա սկեսուրն աշխարհէ ըստ ամենայնի յագեալ՝ օրհնելով և շնորհակալութեամբ իւր ժառանգէն և հարսնէն՝ փակեց աչքերն և ցանկալի թաղմամբ միաւորեցաւ իւր բազմաշխատ ամուսնոյ հետ գերեզմանի մէջ, ամենեքեան միաբերան գովեցին և նրա արդար վաստակոց համար գուշակեցին, որ նա շատ ազգասիրական գործոց նպաստամատոյց և ձեռնուու լինի:

Ոչ նայելով նորա հեղ և քաղցրաբարոյ բնաւորութեան, հասարակաց կարծիքն, որ այլով անուամբ ասվում է ձայն բազմաց, նորա վերայ կնքեց Ղորմու սովորութեամբ աղա*) անունն և աղա Մարգարին յիրաւի հաստատեց իւր աղայութիւնն թէ զանազան քաղաքական պաշտօնավարութեամբ բազում անդամ դատաւոր ընտրուելով և քաղաքագլուխ հանդիսանալով և թէ քաղաքի կարեաց և պիտոյից իւր ճոխութեամբ օգնելով, և աղքատաց ու կարօտելոց համար իւր սիրան, ձեռն ու գանձն միշտ բաց պահելով:

Երբ աղա Մարգար Հայրապետեանի որդիքն՝ կարապետ և Մկրտիչ եղած մին 12 և միւսն 10 ամաց, այն միջոցին՝ այսինքն 1827 թուին, ըստ հրաւիրանաց հասարակութեան նոր Նախիջևանայ՝ եկաւ Աստրախանէն երևելի Սերովիէ վարժապետը Պատկանեան հանդերձ իւր որդովէ՝ տիրացու Գաբրիէլւ և տիրացու Պետրոսիւ. նոյն տարին եղաւ հիմնար-

*) Աղա խօսքը, որ ինչպէս պատուանուն շատ հասարակացել է Հայոց ընտանեկան զբուցի մէջ, եթէ հայերէն թալզմանենք, կլինի ոչ իշխան կամ պայազատ, Կհազ այլ երէց եղբայր, Շտարայի եղաւ հիմնար-

կութիւն ազգային մեծ ուսումնաբանին: Հասարակութեան մէկ մասն ևս հրաւիրեց Մոսկովյէն գիտնական Թէոդորոս Խատամեանին, որ մէկ քանի երևելեաց որդիքը սկսաւ կրթել իւր մասնաւոր դրաբուցումը: Ի թիւս այս մանկանց աշակերտեցան հանգուցեալ Խատամեանի մօտ և աղա Մարգարի որդիքն՝ Կարապետն և Մկրտիչն:

Կարարապետ Մարգարեան Հայրապետեանն ծնաւ 1816 թուին յուկիսի 24-ին: Հանգուցեալ Խատամեան վարժապետէն մէնք լսել ենք, որ սա իր ուսման ընթացքը փառաւոր կերպով աւարտեց իւր մօտ, իւր ժամանակի համար զարմանալի յասաշաղիմութիւն ցոյց տալով հայոց, ուսւաց և այլ գիտութեանց մէջ, մանաւանդ առանձին սիրով պարապում էր սերտելով հայոց զբականութիւնը:

Իւր ուսումը աւարտելով՝ սկսաւ պատանին Կարապետ վաճառականութեամբ պարապիլ՝ բայց վաճառակութեամբ պարապելով՝ բարձի թողի չարտուսումն սորամէն սկսաւ նախ Նախիջևանայ անձնակրթութեան նոր ասպարէզն: Դեռ ևս աշակերտութեան ժամանակն, երբ Խատամեան վարժապետը իւր աշակերտաց ձեռամբ հանդիսացուց Աւարայրոյ աշխարհուչակ պատերազմի տեսարանը, հանգուցեալ Կարապետը ունէր այն հանդիսի մէջ Քաջին Վարդանայ գերը: Եւ յիրաւի որ նորա հոգին զգեցեալ էր՝ ի մտնկութենէ, և մինչեւ վերջն իւր կեանքն զոհ էր զնում ողջակէզ՝ ի սեղան սիրոյ ազգի, ունելով իւր նախնեաց բնիկ ազգասիրութիւնն և իւր հօր հեզութիւնն, առաւելնախընտիր կ'համարէր իւր նիւթապէս մխասուիլն, քան թէ այլոց բարոյապէս վնասելն:

Աղա Մարգար Հայրապետեանի վերջին գերզաս-

տանական գործը այն եղաւ, որ կամեցաւ իւր անդշը բանիկ որդւոյն— և արապետին ամուսնութիւնն տեսնել և ընարեց իւր և իւր խոհեմ տիկնոջ հաճութեամբ ուկերիչ (խույսմի) Ստեփանի երկրորդ գուսարն, օրիորդ Բերսաբէն, որ իւր ժամանակն, ամենքի վկայութեամբ քաղաքի մէջ ամենազեղեցիկն էր համարուած. և այդ պսակը հանդիսապէս կատարեց, իւր ժամանակը երևելի և հոչակաւոր Գաբրիէլ քահանայն Պատկանեան. այս պատահեցաւ 1842 թուին, սուբբ Լուսաւորիչ մայր եկեղեցւոյ մէջ:

Երբ աղա Մարգարն այս գերդաստանական մեծ պարտքն ևս կատարեց և հասուց, այնունետեւ խսպառ թողուց իւր առետրական գործոց վարչութիւնը իւր անդրանիկ որդու Կարապետի ձեռք և ինքը իւր կեանքը բոլորովին տեառնազրեց հասարակութեան և քաղաքական գործոց՝ և բարեպաշտ վարուք, բարի անուան արժանացեալ՝ բարի մահուամբ ելաւ այս երկրաւոր կեանքէս, և 1855 թաղուեցաւ Սուբբ Նիկողայոս եկեղեցւոյ բակումն յետոյ ժամանակաց սորա շիրիմի վերայ տապանագիր գրեց նոյն տէր Գաբրիէլ քահանան:

Միայն ճոխութիւնը չէր, որ այս Մարգարեան կարապետին վաղբաջ արժանացոյց հասարակաց պատուադիր աղա յորջորջմունքին՝ բազմադիմի աղգօդուտ գործք, ինչ որ սա գեռ ևս իր կենդանութեան ժամանակն, թէ և միշտ հօր անուամբ կատարում էր, բայց ամենեցուն յայտնի էր, որ ինքն էր յօժարամիտ կատարողն, բարերարեալ և երախտագէտ ժողովրդիւն բերնէն բռնի քարշեցին այս խոստովանութիւնն. չէր եղած գեռ ևս օրինակ այսպիսի, որ այսքան գեռաւուրց մատաղատունկ հասալի մէջ, որ ոք և իցէ նոր-Նախիջևանայ մէջ ստացած

լինի այդ անունն՝ Նոր-Նախիջևանայ կասեմ, որ ծերոց պատիւն միշտ եղել է և կայ, և ուր ծերբ իրաւի գիտեն իւրեանց պատիւն պահել ըստ արժանուոյն: Անդրանիկ ծնունդը աղա Կարապետի, վաղաթառամ ծաղկանց նման գնացին հետզհետէ՝ բայց անհնար էր, թէ այսպիսի նախնեաց յեանորդն և այսպիսի բարեպաշտ ծնողած զաւակօք՝ երեք որդւովք և երեք դստերօք՝ որք միշտ բոլորեալ էին շուրջ գըստանովն ըստ օրհնութեան Սաղմոսերգուին:

Քոռասուն և չորս ամաց էր աղա Կարապետն, որ 1860 թուին հասարակաց բուէարկութեամբ ընտրուեցաւ Քաղաքազլուխ^{*)}: Սա համարձակ կարող էր ասել, ինչպէս երբեմն ասել էր մարգարէն Դաւիթ, „Փոքր էի յեղբարս իմ և կրտսեր ՚ի աւան հօր իմոյ, արածէի զիսաշինս հօր իմոյ՝ եղբարք իմ մեծամեծք և գեղեցիք, ոչ հաճեցաւ ընդ նոսա Աստուած՝ այլ զիս էառ ՚ի հօտէ խաշանց հօր իմոյ“: Եւ յիրաւի, որ սորա ընտրութեան ժամանակ լսելի եղեւ ձայնն Աստուածոյ ՚ի ձայն բազմութեան, որոնք միաշունչ և միահոգի խնդրեցին նորան և չը փոշմանեցան: Սա իւր զբօշակի վերայ առ անգամ մի զրել էր այս մի քանի խօսքերն. „Ճշմարտութիւն և արդարութիւն հայրենաւ, սիրութիւն, և եղբայրսիրութիւն ներողամտութիւն և ազգի դէպի լուսաւորութիւն անխարդախ առաջնորդութիւն“:

Այս երիտասարդ քաղաքազլուխն, որի նմանը մինչև այն օր չէր եղած Նոր-Նախիջևանի տարեգրութեանց մէջ, այն՝ որ իւր մայրենի քաղաքն, և իւր

^{*)} 1857-ից մինչև 1860-թիւն աղա Կարապետը ընտրուած էր օգնական Քաղաքազլոյ՝ ուրիշն սորա պաշտօնավարութիւնը, այն ժամանակի համար, շատ կանուխ պէտք է համարի՝ ըստ որում, այդ հասակում դեռ ևս լուսած չէր, որ մի այլ ոք ընտրուած լինէր Քաղաքազլուխ:

համազգային հասարակութիւնն այնպէս մտերիմ եռանդեամբ սիրում էր, ինչպէս որ սիրում էր իր գեղասատնն. քաղաքի բարեբաստութեան համար այնպէս ճիգն դնում էր, ինչպէս իւր սեպհական տան բարեբաստութեան համար. քաղաքի պայծառութեան համար և քաղաքացեաց կրթութեան համար այնպէս կ'հոգար ինչպէս որ իւր զաւակաց, որդւոց և զատերաց հրահանգութեան համար, առանց վատերուն և ազգադաւխարդախներուն կշամմբելու..... Իրան շըրջապատեց անարատ և ամբիծ նորաբողբոջ ընկերներով, և ձեռք ձեռքի տուած՝ այնպէս սկսաւ քաղաքի երջանկութիւնն առաջ տանել, որ այնուհետեւ քաղաքացեաց հարկաւոր չէր խրատ կամ կանոն՝ բաւական էր, թէ միայն նորա օրինակը իւրեանց ուղեցոյց գնէին: Թէև տեսնում էր, որ ին տատուծոյ երկրպագուք խեթիւ էին մտիկ անում նորա յառաջադիմութեանց՝ բայց նա, որպէս թէ չ'տեսնելով, զանազան ձեռով և նորագիւտ հնարներով ճանապարհ էր բաց անում այն մատադաւուրց զիանականաց ասպարիզի համար, որ եւրոպացոց ճեմարանների և համալսարանների մէջ իւրեանց հոգիքն լուսաւորելով՝ գալիս էին իւրեանց աշխատանքն նուիրել ազգի օգտին և հասարակաց երջանկութեան:

Սոցա մէջէն որոշելով Տէր-Գաբրիէլ Պատկանեանի աշակերտ Միքայէլ Նալպանտեան ազգասէր պատանին, ամենայն հնարք ի գործ գրեց, որ ուղարկէ նորա Հնդկաստան, ուր յեօթանասուն և ութուն ամաց յետէ կային հրիտակը, արդէն մոռացութեան փոշով ծածկած և այն անձնագիր հայրենասիրի ձեռքով գտաւ հնարք, որ այն Նախիջևանաց համար „պարտէզ փակեար“ և „աղբիւր կնքեալ“ եղած գանձէն, տարէց տարի գայ մտանէ ՚ի գանձարան քաղա-

քին..... ուուրիի, որոնց հարկաւորութիւն ունէին այն քաղաքի նորահաս մանկանց և օրիորդաց կրթութիւնն և դաստիարակութիւնն: Առանձին խնամք և գութ սկսաւ ունենալ հասարակաց մեծ ուսումնարանի բարգաւաճութեան, դաստիարակաց կենցաղավարութեան և դաստիարակելոց յառաջադիմութեան համար՝ ուժիկներն ապահովելով, ապահովեալքն պաղարեր առնելով, արժանաւորաց վարձն անաշառ հատուցանելով և յիւր կողմանէ ծածուկ իւրաքանչիւրոց արիաուրն առատածեռնելով՝ ընդարձակ ճանապարհ հորդեց յետադայ սերնդեան բարւոք կրթութեան համար:

Նոյն հայրակնամ զթութիւնն ունեցաւ օրիորդաց վարժարանի վերայ, որ սորա քաղաքազիսութեան ժամանակ և սորա առանձին հոգատարութեամբ հիմնուեցաւ, հաստատուեցաւ և կեանք ստացաւ: Այսպէս քաղաքական վարչութեան ծանր լուծը իւր ուսոց վերայ ունենալով՝ մանկանց և օրիորդաց կրթութիւնն ևս իւր անձին այնպիսի պարագ կ'համարէր, որ նոցա զարգացման համար ոչ ինչ զէր յօժար խնայիլ միայն թէ այդ զոհը լինէր յօգուտ իւր ազգին, իւր եկեղեցւոյն և իւր քաղաքին:

Հստ չարաբաստիկ ճակատագրի ազգիս, այնպիսի խառնակ ժամանակ էր աղա Կարապետ Հայրապետեանի քաղաքազիսութեան միջոցն, որ յաւուրց հայրապետութեան հանգուցեալ սրբազան Կաթողիկոսին ներախի մնացած եկեղեցական հաշոց և առաջնորդաց խոռվութեան բոցն, կողմանակի հողմոց շնչմամբ, աւելի արծարծեալ բորբոքեցաւ մինչեւ այն աստիճան, որ 1847 թուէն սկսեալ տեսեց մինչ ՚ի 1857 ամն, այսինքն մինչեւ ի մահն Ներսիսի և կրկնապատեալ ուժով շարունակեց մինչեւ ի վախճան վեցամեայ կաթողիկոսութեան Մատթէոսի, (որում աղա Կարապետն

Հայրապետեան համարեալ էր հարազատ որդի սիրելի վասն ազգասիրութեան) և զկնի նորա ևս մինչև ի 1867 թիւն, երբ եկաւ Նոր-Նախիջևան քաղաքին յայցելութիւն Վեհափառ Սրբազն Հայրապետն Գէորգ, որ մեծին Աղէքսանդրի նման այդ անլուծանելի Գորդեան հանգոյցն լուծեց:

Այս տեղ երեւցաւ նորա վերայ այն ազգասիրական գիւղագնական ողին, որով յամենայն կեանս իւր էր վառեալ հասարակութեան տառապեալ մարմինն՝ կուսակցաթեան բռնութեամբ գէշագէշ պատառում էր. Վարդանայ գերն ի մանկութեան ստանձնողն՝ արդէն ունէր իւր հանդէպ ամենայն արհաւրբն, ինչ որ ունէր երբեմն և նորա նախագաղափարն, ծածուկ մանր մունր Վասակներ, տէր Զանգակներ և տիրացու Արձաններ, քաղաքին և ողորմելի հասարակութեան զլիխն ամենայն գարանակալութիւնն և խարդաւանութիւնն կտրկտի նման թափեցնում էին. սա իւր ուխտապահ արդարակորով ընկերօք ամենայն ծածուկ և յայտնի նետից նշաւակ լինելով, միայն ազգի խոյտառակութիւնն էր ծածկել ջանք դընում, քաղաքակցիաց երկրապառակութիւնն վերջացնել վերցնել ճգնում, և հին անցքերն մոռացօնս մատնելով նոր գաղափարաց տարածելու դուն գործում, բարւոք համարում իւր հակառակորդաց կրշտամբանաց դէմ խույ ձեսնալ և նախանձաբէդ վրէպ կտրծեօք զառածելոց տմբաստանութեանց դէմ քաղցըր բանիւք այն առարկութիւնն ձմլել և մատնցայց լինել ազգի կարեաց լայն ասպարիզին, ուր ամենայն ոք կտրէ առաքինանալ: Անօպուտ էր համարում այլոց սխալն յանդիմանելն իսկ՝ բաւական համարելով և այն բարի խրան, ինչ նորա թերութենէն և թիւրութենէն պիտի յաջողէր քաղել, որ նոյն օրինակ

զառածմանց մէջ չ'խոտորի: Թէպէտնորա եօթիւնն քաղաքագլխութիւնն նորա նախորդաց բազմաց դէմ աշխարհազոյժ բողոք էր, որ անբառբառ և անմռունչ կաղաղակէր, ,թէ որք յառաջ քան զիս էին.... և այլն, բայց նա իւր համար մէկթանժխտելի օրէնք էր հաստատել, որ անցելոց ժամանակաց գարշահութիւնն որքան կարէ, այնքան խնամքով ծածկէ, որ նորոց ծծած պարզ օդն չապականուի: Եւ այս իսկ անձնազոհութիւնն պատճառ եղաւ, որ նա անձնական տկարութեամբ չ'կարողացաւ երկարատև մնալ այն իշխանութեան մէջ, որ արդէն նորամով փառաւորուել էր և իւր արդիւնքն երախտապարզե առատութեամբ ցոյց կուտար.....:

Տարածամ լսուեցաւ, որ Նախիջևանայ ազգասէր և հայրենասէր նահատակն խոցուել է ներքին կենախուղ խօթութենէ, որ նորան բռնադատեց թողուլ հասարակութեան խնամարկութեան ասպարէզն և ուշ դարձուցանել իւր քայլայեալ առողջութեան վերայ: 1867 թուին հրաժարուեցաւ քաղաքագլխութեան պաշտօնէն և երախտագէտ ազգն և հասարակութիւնն այն ժամանակ իսկ ողբաց իւր որբութիւնն, որ նոցահայրն Հայրապետեանց տան նահապեան մեկուսացաւ իւր տան անկիւնն և գլորուեցաւ 'ի մահիճս ցաւոց, ուր և էարբ զբաժակն մահու, զոր 'ի ձեռին ունէր յօրէն յայնմանէ, երբ իւր անձն զոհեց ի ծառայութիւն քաղաքին և հասարակութեան:

Խոր էր թափանցել նորա երիկամանց մէջ սլաք անբութելի հիւանդութեան՝ ոչ մարդկային հնար մարթացաւ օգնել և ոչ վերնախնամ գթութիւն երկնից կամեցաւ հասնել 'ի նպաստ՝ քանզի կամք էր յաւիտենական տնտեսութեան ցոյց տալ թէ՝ որպէս մէկ մարդ կարող է կործանել մէկ քաղաք կամ մէկ



հասարակութիւն, կամ մէկ ժողովուրդ, նոյնպէս և մէկ մարդ կարող է յոտին կանգնել մէկ ազգ, մէկ բազմութիւն, մէկ աշխարհ. և ինչպէս ամենախնամ տեսչութիւնն, երբ կ'կամենայ մէկ ազգի մէջ բարդաւաճեցնել յառաջադիմութիւն, երջանկութիւն, կը յարուցանէ մէկ այնպիսի մարդ, որ կ'դառնայ նորաձեռին անօթ ընտիր և նա ՚ի քարանց կոկոր արտաքըս հրաւիրել որդիս Արքահամու՛ նոյնպէս և երբ կամենայ մէկ երկրի վերայ իւր անտես գաւազանի հարուածն ծանրացնել, նորա մէջէն կամաց կամաց կ'բառնայ զայր հզօր և զկին զօրաւոր, և յետոյ ինքն իրան կերեի, որ արդէն պակասել է և զօրութիւն հացի, և զօրութիւն գինւոյ:

Այս՝ նախախնամութեան ձեռքի պիտոյացուցեալ ականաւոր անձանց մէկն էր և աղա Կարապետն Հայրապետեան, որ մինչև յետին շնչոյ տուր և առն խղճալի քաղաքի և հասարակութեան ցաւոց դարման կ'լինդրէ՛ փոխանակ իւր անդարմանելի ցաւոց ապարինութիւն որոնելու, և իւր կենաց վերջին աւուրց մխիթարութիւն այն եղաւ, որ իւր անդարմանիկ դուռտրն Մարիամ 1873 թուին հարմացնելով մի պատւական երիտասարդի՛ Մկրտիչ Սիմէօնեան Ալաճալեանին, ասես թէ մի կերպ մխիթարութիւն ստացաւ նախախնամութենէն, և անողոր հոգւով, հանգիստ խղճմտանքով և լիայոյս հաւատով ազգի ապագայ երջանկութեան, կնքեց իւր բազմարդիւն կեանքը, յորմէ և ոչ մէկ վայրկեան ունէր խորած և յօդտէ հասարակաց ինայած:

1873 թուի Յունուարի 30-ին վախճանեալ, մեծահանդէս յուղալկաւորթեամբ թաղեցաւ իւր հօր

և պատու մօտ սուրբ Նիկողայոսի գերեզմանատան^{*)}:

Կուգան աւուրբ, որ Երախտագէտ ազգն անկեղծ սրախ կ' մօտենայ սորա գերեզմանին տարափել իւր շնորհակալեաց և գոհութեան արտասուրքն, երբ արդէն նորա հողանալի մնացորդք չեն լինիլ. բայց նորա յիշատակն որբան զարդարուն և ոսկեզօծ տառիւք գրուի վիմի վերայ, չի հաւասարիլ այն արձանազրին, ինչ որ ժամանակաւ պիտի նորա առաքինութեանց յիշատակն խորագոյն փորագրէ բազմաց սրտից վերայ երկաթի զրչաւ հառաջանաց և արտասուտովոր մրով ափսոսանաց:

Հստ ամենայնի նուիրեալ էր իւր անձը պայծառութեան քաղաքի, և ոչ մի մասը նորա մնաց զուրկ յայցելութենէ աղա Կարապետին թէ ի կենդանութեան իւր հօր՝ աղա Մարգարի, և թէ զինի վախճանի նորա: Ի բազում ամաց հետէ մեծաշէն սուրբ եկեղեցին յանուն վերափոխման Աստուածածնի կայր առանց զանգակատան: Շինութիւն այս եկեղեցւոյ և հաշուծախուց նորա եղեւ համարեա թէ պատճառ այն ամենայն խոռվութեանց, յորոց ծագեցան բազմամեայ անհանգստութիւնք Արքազան Հայրապետին Ներսիսի ընդ ամենայն ժամանակս առաջնորդութեան նորա վիճակին Նախիջևանաց և Բեսսարաբիոյ:

Յորժամ Արքազան Արհին Ներսէս, որ Կայսերական հրաւիրանոք թողել էր ՚ի 1828 թուին իւր բնիկ առաջնորդութեան վիճակն, զթեմն Վրաստանեացց

*) Մի տարիից յետոյ, 1874-ին յունուարի 30-ին կատարելով նորա մահուան տարեղարձը, գիտնական և երկելի քարոզիչ Գրիգոր Եպիսկոպոսն Աղափիրեանց կարդաց մի զամբանական ճառ, որ յօդուածիս վերջը զըինք, որ խոր տպաւորութիւն արաւ ժողովրդի վրայ: Եւ յիրաւի, որ այս զամբանականը լստ իւր սեռին, երկելի ճառ է, ոչինչով պակաս տյլազգի երկելի քարոզաց զրուածքէն:

(և որպէս ասացաւ) յամսեանն օգոստոսի անցամելով
Նոր-Նախիջևանայ վրայէն, գնացել էր Քիշնէ, և զինի
երեք ամ անդ մնալոյն, կայսերական հրամանաւ՝ ի
1831 ամի ընկալաւ հրաման մնալ անդ անուամբ
թեմակալ Առաջնորդի Նախիջևանայ և Բեսսարաբիոյ.
յամսեանն Յուլիսի նոյն ամի կոչեաց զԳաբրիէլ սար-
կաւագ Պատկանեան առ ինքն, զի նա զՔիշնէի Հայոց
Հոգեսր Կառավարութիւնն փոխէ՝ ի Նախիջևանայ և
'ի Բեսսարաբիոյ Հայոց Հոգեոր Կոնսիստորեայ, որ և
կատարեաց ըստ հրամանի նորա՝ և 'ի 1832 թ. ձեռ-
նագրեալ քահանայ՝ դարձաւ՝ ի Նոր-Նախիջևան վասն
քահանայագործութեան և Հոգեոր Կառավարութեան
Նոր-Նախիջևանի քարտուղարութեան և բարեկարգչու-
թեան։ Բնդ նմին Սրբագան Արհին Ներսէս հրամայեալ
էր Հոգեոր Կառավարութեան Նոր-Նախիջևանայ առ-
նուլ յեկեղեցեաց զհաշիս այնոցիկ ամաց, որք գեռ-
չէին տուեալ։ 'ի 1832 թուին Հոգեոր Կառավարու-
թիւնն սկիզբն արաւ հաշուատեսութեան և գտու,
որ 1815 ամէ սկսեալ ելից և մտից մատեանների
մէջ չկար և ոչ առղ մի դրած ել և մուտ, ոչ 'ի վեց
եկեղեցիս քաղաքի, ոչ 'ի սուրբ Խաչն և ոչ ի ինդ
գիւղօրէս։ Անդամբ Հոգեոր Եառավարութեան, որք
հակամէտ էին զամենայն ինչ անգիր պահել, յանձնե-
ցին Գաբրիէլ քահանային, զի նա ինքն կատարեսցէ
զհրաման Առաջնորդին, պատճառելով թէ՝ նորա եր-
կնչին՝ ի ժողովրդենէ յարուցանել այնպիսի ինդիր։

Գաբրիէլ քահանայ Պատկանեանն մնաց իսպառ
միայնակ, և Սրբագան Ներսէս սկսաւ ստիպողականն
հրամանօք նեղել զՀոգեոր Կառավարութիւնն։ Յանհա-
րինս մտեալ Գաբրիէլ քահանան գնաց խորհրդակցել
ընդ իշխանաց, որք չէին աղտեղուած եկեղեցական
հաշուօք, յորոց միջի կայր և աղա Մարգարն Հայրա-

պետեան։ Յետ բազում խորհելոյն՝ հաստատեցին՝ ի
միջի իւրեանց, զի Տէր-Գաբրիէլ Պատկանեանն սկիզ-
բըն արասցէ հաշուապահանջութեան՝ ի Սուրբ Նիկո-
ղայոս եկեղեցւոյ, որոյ հաշիւք էին ի ձեռս Մարափ-
րոս աղայի Խոճայեանց։

Տէր-Գաբրիէլն խորհրդով աղա Մարգարայ ծանոյց
վերոյիշեալ Մարտիրոս աղային, թէ հրաման է՝ ի
Սրբագան Առաջնորդէն Ներսիսէ առնուլ զհաշիս եկե-
ղեցեաց, և արժան համարի սկսանել՝ ի Սուրբ Նիկո-
ղայոսէ, վասն որոյ և ինդպէ, զի նա ժամանակ յատ-
կացնէ։ Տէր-Գաբրիէլն իմացում տուեց աղա Մարգա-
րին և միասին գնացին Սուրբ Նիկողայոս եկեղեցի,
ուր և Մարտիրոս Խոճայեանն եկաւ։ Երեսփոխան
Ռափայելէն պահանջեցին ելից և մտից մատեանքն,
և նա բերեց Ատեան։

1815-ին հանգուցեալ Յովհաննէս արքեպիսկոպոսն
Գայլակերեան բաժնել էր իւրաքանչիւր եկեղեցին
երկու մատեան իւրով ստորագրութեամբ վաւերա-
ցուցեալ և կնքովն ժապաւինեալ, բայց չկար ինչ
մէջը զրած՝ այլ այնպէս անարատ մնացել էր։

Հարցուցին Մարտիրոս աղային թէ՝ եկեղեցին
ունի՞ փող և որքան։

Մարտիրոս աղան պատասխանեց թէ՝ եկեղեցւոյ
փողն կ'լինի 8000 ռուբլի թղթագրամ և իմ մօտ է։

Աղա Մարգարն հարցուց եթէ այդ 8000 ռ. գրա-
մագլուխ շինենք և այս մտից մատեանի մէջ զրենք՝
դու ևս կ'ստորագրէս։

Մարտիրոս աղան պատասխանեց՝ ինչ պատճա-
ռաւ պիտի չստորագրեմ, ոչ աղաքն եկեղեցւոյ փո-
ղըն է՝ միթէ ես եկեղեցւոյ որդի չեմ, միթէ ես եկե-
ղեցւոյ փողն պիտի ուտեմ։

Տէր-Գաբրիէլն ասաց՝ աղա Մարգար և աղա Մարտիրոս, որովհետեւ եկեղեցւոյ մատեանի մէջ զրած դրամագլուխն պիտի լինի անմերձենալի, գուցէ հարկաւոր լինի եկեղեցւոյ վերայ միսել և, որ առանց Առաջնորդի անօրէնութեան չէ հնար, վասն որոյ այդ 8000-էն քո մօտ 4000-ը մնայ աւանդ, միայն 4000 գրենք:

Երկուքն ևս շնորհակալ եղան, որովհետեւ կարծում էին թէ՝ Տէր-Գաբրիէլն պիտի ասէ. „միթէ տյաքան տարի, 1815-էն մինչև 1832-ը այս հարուստ եկեղեցին միայն այսքան ունի“։ Այն ժամանակ առաւ Տէր-Գաբրիէլն գրեց միայն 2000 սուբլի, իսկ միւս 6000-ը թողեց, որ եկեղեցին փողի կարօտութիւն չունենայ. Յետ այնորիկ Մարտիրոս աղան հրաւիրեց նոցա իւր տուն. աղա Մարգարն հրաժարութեցաւ, թէ դործ ունիմ, իսկ Տէր-Գաբրիէլն ընդունեց հրաւէրն։

Նոյն երեկոյին, երբ Տէր-Գաբրիէլն գնաց աղա Մարգարի տուն, աղա Մարգարն պատմեց թէ՝ Սուրբ Նիկողայոսէն յետ դառնալու ժամանակն պատահեցաւ Սուրբ Լուսաւորչի երեսփոխանն՝ կարապետ աղա Քայեալեանն, որ էր քենակալ Մարտիրոս աղային, և երբ իմացաւ հաշուատեսութեան հանգամանքն, ուրախացաւ և ասաց թէ՝ վաղիւն եկէք Լուսաւորիչ և իմ հաշիւն ևս տեսէք։

Այսպէս, աղա Մարգարի ներկայութիւնն ունեցաւ այն օգուտն որ, որովհետեւ ներսիսի համբաւն սփռեալ, ահու սարսուռ էին հաշուատեսութեան տղագաւ, իսկ նա հասկացուց բանի որպիսութիւնն, ամենեքեան միամտութեցան և ապահով հաշիւ տուին։ Միայն Աստուածածնայ եկեղեցւոյ հաշիւն չ'տուին, և այս պատճառաւ ծագեցաւ խոսվութիւն և զանգակատան շինութիւնն մնաց, և ներսիսի ուղարկած հաշուա-

տեսն Թաղէոս վարդապետն Բէկնազարեան, որ յետոյ եղաւ Կոռաջնորդ Պարսկաստանի և Հնդկաստանի՝ քանի ամ վայրավատին նստելով և մինչև 15000 սուբլի մախելով, հաշիւն որպէս թէ վերջացուց։ Յետ երթալոյ Թաղէոս վարդապետի՝ աղա Կարապետն, հաճութեանմբ իւր հօրը նախընթաց լինելով՝ շինեց ժողովրդեան հետ այն մեծաշէն զանգակատունն, որ զարդէ քաղաքի, որովհետեւ ունէր մէկ առանձին ջերմեռանդութիւն կրօնի, իւր բնիկ աղատամատութիւնն միշտ բարեպաշտ զգացման հետ ՚ի մի ձուլելով և այլոց բարի օրինակ դառնալով։

1828 թուին, դեռ մեծ վարժատունը չէր լրացած շինութեամբ, որ օգոստոսի ամսին եկաւ Նորնախիջեան, Կայսերական հրաւիրանօք, Ներսէս արքեպիսկոպոսն, որ քանի օր մնաց Խաչատուր աղա Խուամաճեանի տանն, ուր և ծանօթացաւ ժամակի մեծատանց հետ։

Որովհետեւ Սրբազնն Ներսէս իւր առաջին գալատեան ժամանակն չէր տեսել աղա Մարգար Հարգարկետեանի, յատկապէս խօսեցաւ նորա հետ, հարց ու փորձ արտւ նորա որպիսութեան, և երբ իմացաւ, որ նա իւր որդիքն դեռ տուած չէ վարժատուն, կամեցաւ տեսնել նոցա և աղա Մարգարն բերեց նոյն երեկոյ իւր անդրանիկ կարապետն։ Սրբազնն Ներսէս, նայելով այս մանկսն արտաքին շնորհացն, գուշակեց զներբին բանքարս նորա, օրինեց և մարգարէացաւ. „լաւ մարդ կ'գառնայ ոչ այնքան հարստութեանը, որքան հայրենսասիրութեամբ, և ազգասիրութեամբ բարի անուն կ'ստանայ“։ Եւ յիրաւի այդպէս եղաւ, որ նա հօրէն որչափ հարստութիւն ստացաւ՝ ոչ միայն բազմապատկեց, այլ և հայրենասիրութեամբ և ազգասիրութեամբ գերազանցեց բան

զբագումն, որք միանդամ իւր ժամանակն կային:

1845 թուին Դեկտեմբերի տասին, երբ արդէն ընտրեալն 'ի կաթողիկոսութիւն Սրբազն Հայրապետն Ներսէս, երկրորդ տնդամ եկաւ Նոր-Նախիջևան և թագաւորապայշել շքով ընկալեալ եղե հասարակութեան և բոլոր քաղաքի մեծ և փոքր բնակիչներէն, բաղմութեան մէջ Լուսաւորյի եկեղեցումն տեսնելով աղա Մարգարին և նորա որդուն Կարապետին՝ ժպտաց, և երբ Վեհափառ Հիւրին տուն տարին, որ պատրաստուած էր նորա համար ժամանակաւոր վեհարան, Սրբազն Արհիապետն ասաց աղա Մարգարին, երբ առ մօտեցաւ նորա աջը համբուրելու, „Հայրապետեան աղա Մարգար, Աստուած վիճակեց, որ ես ևս եղայ Հայրապետացու, և եթէ Աստուծոյ կամքն լինի և Յովսէփայ նման ճանապարհին չը մեռնիմ՝ կ'լինիմ Հայրապետ. և դու ի՞նչ միտքի ես, դու դարձեալ պիտի մնաս Հայրապետեան, թէ պիտի փոխես մականունդ“: Աղա Մարգարն պատասխանեց, „Ծնել եմ Հայրապետեան և յոյս ունիմ որ պիտի մեռնիմ Հայրապետեան“: Սրբազնն Ներսէս հառաչեց և ասաց. „Մահն ամենուս համար է. բայց ես յոյս ունիմ, որ դու այնպէս Հայրապետեան չ'մեռնիս, ինչպէս Հայրապետեան 'ի ժամանակի ծննդեանդ էիր. քու մահն երջանիկ մահ պիտի լինի, որովհետեւ քու որդին, որ լսել եմ, թէ նոր պսակուել է, պիտի ոչ քու անունը, այլ բոլոր Հայրապետեանց անունը անմահացն“:

Զկսի այսքան սիրալրական բանից, Սրբազնն Ներսէս, իւր հայրապետութեան ժամանակն չունեցաւ ժամանակ, գուցէ և կամք իսկ աղա Մարգար Հայրապետեանին կոնդրակ մի գրել, և յանցանքն էր կիսով չափ աղա Մարգարին, որ տեսնելով թէ սըրբազն հրաւիրեալն 'ի հայրապետութիւն համայն աղ-

զի սկսաւ ոմանց կամաց աւելի հպատակիլ 'ի մնաս անմեղաց, ոչ միայն այնուհետեւ նստաւ սգաւոր իւր տան մէջ և չ'գնաց յուղի արկանել զնա, այլ մէկ նամակաւ չ'չնորհաւորեց նորա օծումն 'ի Հայրապետութիւն: Այլ այս պակասութիւնքն լցուց նորա անդրանիկն աղա Կարապետն, և այն՝ առանց իւր հօր կենցաղագիտութեան ընդդէմ շարժելոյ, որովհետեւ Սրբազն Հայրապետն Մատթէոս, գոլով 'ի հեռուստ Օսմանեան տէրութենէն եկեալ, միայն լսելով աղա Կարապետի ազգասիրութիւնն և հայրենասիրութիւնն արել էր նորան որդեգիր իւր հայրութեան և Սուրբ Էջմիածնի Ծնողութեան, և այն ժամանակներն, որ բազումը ցանկանում էին զանազան մեծագին նուշերներով նորա սիրտն զրաւել ու մինչ այն անաշառ Հայրապետն արծաթն և ոոկին արհամարանօք յետ կ'դարձուցանէր, պատասխանուոյ անզամ արժանի չըհամարելով զնուիրաբերսն, ինքն երաց իւր հայրապետական կոնդրակալ զդուռն բանակցութեան ընդ աղա Կարապետին, շնորհաւորելով նմա զնոր կոչումն բազարագլուխութեան նորա, և օրհնելով զնա և բաջալերելով, որ նա, որպէս սկսել է հանդիսանալ հայրենասիրական պայքարի մէջ առաքինութեամբ և արդարակորով պարկեցաւութեամբ, մինչև վերջն մշտնջենաւորապէս:

Եւ նա որպէս հարազատ որդի Սուրբ Էջմիածնի և արժանաւոր կրող Հայրապետական մականուան, իւր սրտեռանդն մտերմութեամբ Հայրապետական Աթոռոյն և բոլոր համազգային գործոց, միշտ արդարացնում էր այն երջանկայիշատակ Հայրապետի յոյսն և ակնկալութիւնն վասն որոյ և Սրբազն Հայրապետն Մատթէոս ստէպ կրկնում էր իւր կոնդրակաց մէջ Ներսիսի Սրբազն Հայրապետի օրհնութիւնն, որ

դառել էր սրինգ նախախնամութեան՝ և ոչ հայելով
յայն, որ նա հակամէտ էր առ ոմանո յոսոխաց սորա,
առանց կուսակցական ախտակրութեան գրում էր առ
նա վասն սորա, որ ծեր արծիւն չափողանց խիզախ
չի վարուի առ ձագն արծւոյ, որպէս կոչէր նա զսա
առ անգամ մի հոգեկիր Սրբազնն ներսէս. և Սըր-
բազն Հայրապետն Մատթէոս, երբ կամենում էր
առաքել զԱրշարունի Յովհաննէս Սրբեպիսկոպոսն՝ ի
Նոր-Նախիջևան վասն եկեղեցական հաշուոց վերահա-
սութեան, բերանացի պատուիրեալ էր նմա ասել, „որ
նա հոգւով նայում է ՚ի վերուստ ՚ի սխրալի գործս
ազգասիրութեան դեռաւուրց աղա Կարապետի և յոյս
ունի, որ ինչ ինքն մարդկօրէն սխալմամբ արել է՝
նա հոգեշարժ հայրենասիրութեամբ իւրով պիտի ուղ-
ղէ, որ Աստուծոյ տունն վերսախն տուն աղօթից
դառնայ“:

Եթէ Սրբազն Հայրապետն Մատթէոս ՚ի վեր-
ջին ժամանակս կենաց Ներսիսի հանդիպած լինէր
նմա՝ անշուշտ պիտի կարծիք անէինք, թէ Ներսէս
երես առ երես, որպէս կտակ աւանդել էր Մատթէոսին
այնպէս վարուել, որպէս նա յամենայն կեանս իւր,
մինչև ՚ի վերջին տուրեալո շնչոյն վարուեցաւ ընդ
աղա Կարապետին, որպէս թէ Ներսէս պատուիրած
լինէր Մատթէոսին, թէ, ես քու և մարդելոյդ կեզ-
,,ծուպատիր բանսարկուաց հրապուրանօք շեղեալ ՚ի
,,ճշմարտութենէ և հպատակեալ ազգեցութեան զայ-
,,րացեալ մտաց ազօտացուցիչ բարկութեան, ՚ի վերայ
,,Մատթէոս Սրբեպիսկոպոսի և որդեզրի նորա Միքայէլ
,,Նալպանտեանի և միջնորդի շաղկոպի նոցա, ընդ-
,,դէմ իմոյ համոզման և ընդդէմ թելագրութեան
,,խոհականին՝ սայթաքեցայ, վրիպեցայ, և որ ՚ի ման-
,,կութենէ սովոր էի իշխել, զսանձ կամացս ետու

„անհատարիմ ձեռաց. վասն որոյ դու, որ պիտի նըս-
տիս յայն աթոռ, ուստի ես ելեալ գնում եմ առա-
,,ջի այն աթոռոյ յորմէ սարսին և սանդարամետք՝
,,ջանա և գուն գործէ իմ թիւրութիւնս և թերութիւնս
,,ուղղել՝ մի թոյլ տար, որ այն գանձանակն, ուր և
,,այրին երկու լումայ է ձգել և որոյ հանդէպն ՚ի
,,յաւիտենից կար և կայ և պիտի լինի կանգնած ան-
,,վաղման և աներբ գանձապետն Յիառս, լինի նիւթ
,,կրկնակապէն կաշառածգութեան, քանզի հոգւով
,,տեսնում եմ, որ այն գանձանակն կայ ՚ի գլորումն և
,,՚ի կանգնումն բազմաց ՚ի մէջ հսրայէլի և ՚ի նշան
,,հակառակութեան, և որոց պատճառաւ ընդ անձն
,,քո իսկ անցցէ սուր. զօրացիր գարձուցանել զայն
,,՚ի տեղի իւր, և յանձնել այնպիսի գանձաւորի, որ
,,ունենայ զերկիւդ և զսէր անսկզբնական Գանձա-
,,պետին, որով և ոսկերբ իմ անդորր գացեն ի հո-
,,ղախշտի յաւիտենական բնակարանի իմում, քանզի
,,ամենայն բնիոնք տոգորեալ են արտասուօք որբոց
,,և այրեաց, և ես տեսնում եմ, որ չեն արդէն ի
,,ձեռս այնպիսեաց, որք յաջողեն յարգել, այլ այն-
,,պիսեաց, որք ասեն ի սրտի իւրեանց տէր իմ յամէ
,,զգալ, և սկսանին ուտել և ըմպել և արբենալ ընդ
,,ծառայս և ընդ աղախնեայ“: Եւ յիրաւի Մատ-
թէոս Սրբազն Կաթողիկոսի այդ երեկի գործոց
մէջ այդպէս էր ամենայն շարժմանց ձեն, որպէս թէ
միշտ երեւում էր նորան Ներսէս և աղաչում, որ նա
իւր պարանոցէն հանէ այն շղթան, և նա կամենում
էր զայն կատարել ի ձեռն աղա Կարապետի Հայ-
րապետեան:

Նոյնպէս սրտեռանդ մտերմութեամբ ձեռնամուխ
եղաւ Նիսլիթա զիւղի Սուրբ Կարապետի եկեղեցին
և շրջապատ ուխտաւորաց սենեակներն նորոգել: Բայց

որովհետև աղա Կարապետն, իւր յարգելի հօր նման չունէր բնաւ մնափառութիւն, գտաւ այնպիսի հնար, որ այն իւր նպատակին հասաւ և այլոց բամբասանքէն ազատեց իւր գլուխը: Միայն մեր ազգը չէ այսպէս՝ ամենայն ազգաց մէջ ևս կայ նախանձ, յաշաղանք, որ անդադար բերան բանալ կուտայ թէ իրաւամբ և թէ անիրաւ:

Դեռ ևս Աստուածածնի եկեղեցւոյ զանդակատան շինութեան ժամանակն էին սկսել աջ և ահեակ քաշքաշել, որով և ստուգուեցաւ այն առածն թէ „որ շինէ տուն ի հրապարակի՝ կամ մեծ առնէ զայն կամ փոքր“: Թէպէտ ոչ աղա Մարգարն էր անծանօթ բարուց և բնաւորութեանց և իւր քաղաքակցաց և ոչ նորա հարազատ որդին աղա Կարապետն, բայց առաջին նուազին անփոյթ արարին, և զանդակատունն կանգնեցին, որովհետև, յիրաւի, արտառուելի էր այն եկեղեցւոյ կերպարանն և նախատինք բազմաց:

Բայց երբ բանն հասաւ Սուրբ Կարապետի շինութեան, աղա Կարապետն հրաւիրեց իւր անուանակից Կարապետ Տօնիկեանին, որ նա յանձն առնու աշխատանքն, իսկ ծախուց համար չ'մտածէ: Այս աշխատանքն ևս մեծ աշխատանք էր, վասն զի նիսվիթա գիւղն Նախիջևան քաղաքէն երեսուն վերսթայ հեռի է, և ամեն նիւթ քաղաքէն պիտի երթայ՝ թէ քար, թէ աղիւս, թէ կիր, թէ փայտ, և անհնար է վերահասութիւնն այլում յանձնել, առանց նորա մեծակառոյց շինութիւնն և ծախքն ի վտանգ ձգելոյ:

Տօնիկեան Կարապետն ոչ ՚ի ծախուցն փախաւ և ոչ յաշխատանացն, որովհետև աղա Կարապետ Հայրապետեանն կար նորա ետևն Արարատեան յերին նման: Եկեղեցին ամենայն կերտուածովը շինուեցաւ՝ Կարա-

պետ Տօնիկեանն ստացաւ արժանաւոր գոհութիւն: Իսկ աղա Կարապետն շատացաւ այնու, որ այն բարի խորհրդեան կարապետ եղաւ և իւր հզօր օգնութեամբ իւր անուանակից Սբոյ տաճարն կառւցու, և իւր բաղմամեայ փափաքն լցաւ՝ առանց բամբասանաց առարկայ լինելու:

Նոյն բարեպաշտութեամբ շարժեալ, իւր քաղաքագլուխութեան ժամանակ Սուրբ Խաչի տաճարն և վանականաց սենեակիցն և վանահօր բնակարանն և լայնածաւալ սրահի ուխտաւորաց սենեակներն շինելու պատճառաւ, ըստ ամենայնի ծածուկ և յայտնի ծախուց ի պէտու շինութեան՝ թէ աղիւս և թէ կիր, և թէ մշակաց վարձ առատաձեռնելով, առանց պահանջելոյ, որ իւր անունն փառաւորուի, որովհետև գիտէր, որ բարի գործքն ինքն է իւր տրիտուր:

Այլ յառաջ քան զշինութիւն Սուրբ Խաչի, մըտածեց այն սուրբ Խաչի վաղեմի փառքն, պատիւն և պարծանքն վերադարձուցանել: Սուրբ Խաչի տեղն, յառաջ քան զհիմնարկութիւն Նոր-Նախիջևանայ, էր սեպհական կալուած մէկ խազախազգի մեծաւորի, որ զկնի գաղթականութեան Նոր Նախիջևանցւոց, զնել էր աղա Մանուէլ և նորամէն զնեց Յովսէփ Սբքեպիսկոպոսն Սանահնեցի Երկայնաբազուկ Սբղութեան, Նախիջևանայ եկեղեցեաց գրամով, որ Ղըմէն անցել էին նորա ձեռք: Զկնի շինութեան Սուրբ Խաչին, Յովսէփ սրբազնն Արհին, զըտնուելով իՍանկտ Պետերբուրգ Խալդարեան աղա Գրիգորի հայոց հարուստ տպարանն, զնեց զայն և բերեց Սուրբ Խաչի վանքն, որ և շատ գրեանք տպագրուեցան: Եւ երբ 1784 թուէն սկսեալ Վալաքիոյ և Մոլդավիոյ կողմէրը ուստաց գօրաց հետ շրջագայելով՝ շատ գաղթականք բերեց, և 1791 թուի Գրիգորիուպոլիս քա-

դաքն շինեց, այն գաղթականաց մէջէն եօթանասուն և երկու որբ հայազգի մանկունք բերեց ու Սուրբ Խաչի մէջ բնակեցոց: Այս մանկանց և տրապարանի կառավարութեան համար հրաւիրեց Օսմանցոց երկրի սահմանագլուխ տեղերէն Թագէոս Վարդապետ Մարուղեան Կոնստանտինուպոլսեցի Քիթառ իւտան մականուանեալ զիտնական քարոզիչն, և սկսաւ այն մանկանց դաստիարակութիւն տալ: Բայց զանտղան հանգամանք ստիպէցին այն տպարանն և այն վարժարանն, այն մտկունք և այն վարժապետն յԱստրախան փոխագրել՝ որով Սուրբ Խաչի ամենայն գեղեցկութիւնն գնաց անգառնալի և Նախիջևան անշըացաւ:

Աղա Կարապետն իմանալով որ՝ քաղաքն մեծակառոց շինութեամբ չի ասուիլ պայծառ, եթէ այն շինութեանց մէջ չ'լինի դաստիարակութեան փայլեցուցիչ լոյսը՝ կամեցաւ Սուրբ Խաչ վանքն իւր մեռեալ վիճակէն հանել և ի կեանս կոչել վասն որոյ և խնդրեց իւր Հայրազրէն՝ ի Մատթէոս Կաթողիկոսէ մէկ այնպիսի անձն, որ կարողանայ իւր այն նըպատակն մարմնացնել, Նոր-Նախիջևանայ ժողովրդեան, մանաւանդ հոգեսրականաց համար մէկ այնպիսի լապտեր վառել, որ նորա լուսով ճանաչեն իւրեանց վիճակի որդիսութիւնն:

Սրբուգան Հայրապետն Մատթէոս, ըստ իւր հայրական խնամոց, որ ունէր առ աղա Կարապետն և նորա առ բոլոր քաղաքն և հասարակութիւնն, ընտրեց բոլոր Եջմիածնի միաբանութեան մէջէն ըզ Գրիգոր նորընծայ վարդապետն Աղափիրեան, զոր ինքն արժան համարեցաւ և որում ամենեցուն բերան վկայեցթէ, նա կարող է Սուրբ Խաչի վանքն դարձուցանել յայն աստիճան պայծառութեան, յոր ցանկայր տեսանել Ներսէս Սրբազն Արհին՝ զԱլամադարեան Յա-

րութիւն վարդապետն անդ վանահայր կարգելով:

Բայց որպէս Յարութիւն վարդապետին աւագակը եղեն կենախուզ և Սուրբ Խաչն զրկուեցաւ, նոյնպէս և Գրիգոր վարդապետին Աղափիրեան ծածուկ դարանակալութիւն եղաւ առիթ, որ նա դեռ ևս ոչինչ չսկսած կոչեցաւ յետո ի Սուրբ Սթոռն: Սակայն աղա Կարապետն, որ տարեսոր ընտանեկան կենցաղավարութեամբ ընդ Աղափիրեան Գրիգոր վարդապետի աեղեկացաւ համեստ վարուց, բաղցը բարուց և ազգասէր բնաւորութեան նորա, անյոյս չէր վասն դարձի նորա: Եւ յիրաւի, Գրիգոր վարդապետն վերադարձաւ ի Նոր-Նախիջևան ի Սուրբ Խաչ վանս, արդէն ըստ իւրում արժանաւորութեան եպիսկոպոս ձեռնադրեալ ի Վեհափառ Կաթողիկոսէն Գիեռգալ Զորբորդէ՝ յետ երեքամեայ առաջնորդութեան Ալեքսանդրագոլեայ վիճակին, բայց եղիտ զիրելի բարեկամն իւր աղա Կարապետն ի մահճի, յորմէ տկարանալոց էր մարդկային ճարտարութիւնն յարուցանել զնա՝ բանզի ազգային հոգը կենամաշ արարեալ զնա՝ կարճեալ էին զթիւ աւուրց նորա: Ուրախութիւն մեծ եղել աղա Կարապետին ի ծանր հիւանդութեան նորա տեսութիւն այսորիկ Սրբազն եպիսկոպոսի, որ համամիտ էր նմա յազգասիրութեան և համախոն ի հայրենասիրութեան, անկեղծ ընկերակից յամենայն զործ բարիս յօգուտ քաղաքի, վատահալի բարեկամ ի տնտեսութիւն գործոց հասարակութեան, յորմէ թէպէտ և արդէն մարմնով հեռացեալ էր հիւանդութեան պատճառաւ, բայց հոգին ոչ երբէք էր վըհատեալ և ոչ ի սիրոյ ազգին և բաղարին ցրտացեալ:

Սրբազն Գրիգոր եպիսկոպոս, տեսանելով զԱղա Կարապետն, զի և ի կապանս մահճաց կաշկանդեալ ոչ գաղարէ ի պարտուց հասարակաց, ասաց յաւուը

միում, մինչ էր առ մահճօք նորա նստեալ՝ „Աղա Կարապետ, տեսանեմ զքեզ յանկողնի, որպէս էր երբեմն անուանակիցն քո Յովհաննէս Մկրտիչ և Կարապետն ի բանտի. բայց որպէս որմք բանտի չէին բընաւ կտպանք լեզուին նորա, նոյնպէս և շղթայք ցաւոցդ չեն խափանարար ազգասիրութեան քո, որ ոչ երբէք անկանի յարգելանս անտարբերութեան։ Առ այս աղա Կարապետն, որ նոյնպէս ի սէր ազգի և ի պէտս հասարակութեան հեռի կարծէր զիարուածմահու, ի մտերիմ զրոյցս մի առ մի առաջի եղ նմա զիափաք իւր, թէ զինչ ցանկայ առնել, եթէ յարիցէ ի մահճաց։ Ո՞վ որքան բարի բաղձանք ի չիք դարձան, որքան ազգասիրութեան խորհուրդք որպէս ծուխ ցնդեցան, որքան գեղեցիկ մատեռութիւնք խանդարուեցան, որքան հանգերձեալ ազգային բարիք, ընդ միջակտուր լինել կենաց նորա, իջին ընդ նմա ի սառն հող։

Ո՞հ՝ երանի թէ որքան նա սիրէր զազգ իւր և զիայրենիս, զքաղաք ծանդեան իւրոյ զնորն նախիջնան և զքաղաքացիս իւր, զտամներորդ մասն այն սիրոյն ունէր առ իւր անձն, առ իւր առողջութիւնն, առ իւր կեանն՝ զոհ գնաց սիրոյն իւրոյ սիրելի հասարակութեան՝ սիրեցեալ յոյժ ի բազմաց և միշտ բարիս կամելով նաև այնոցիկ, որք մարդկօրէն վրիպանօք մոլորեալ՝ յարուցանէին նմա տաելութիւն փոխանակ սիրոյ նորա։

Քաջայոյս լինելով ողորմութեան և արդարագատ ճշմարտութեան նախախնամողին, դեռ ևս մինչ առողջ էր, պատրաստում էր իւրեան համար պաշար անդառնալի ուղւոյն և երանական վիճակ այն երկնաքաղաքեաց մէջ, ուր խոստացեալ էր Աւետարանն, որոյ էր հնազանդ աշակերտ, ամենայն երանութեան

այնոցիկ, որք կամաւ գրկեն զհոգւոյ արքայութիւն և զհեղութիւնն և զեղբայրութիւնն և զմարդասիրութիւնն և որ քան զամենայն աւելին և զերազանցըն է՝ զնայլենասիրութիւն։

Թէպէտ քաջ գիտէր, որ զինի իւր ևս վասն յիշատակի նորա ոչինչ չի լինի պակաս, բայց յայն աւելի էր համոզուած, որ լավտերն եթէ բան զինքն յառաջ երթայ անտչառ Դատաւորի ատեան, լսէ այն երանական ձայնն թէ „ազնիւ ծառայ, բարի և հաւատարիմ, որովհետեւ ի փոքուգ հաւատարիմ գտար, ի վերայ մեծամեծաց կացուցից զքեզ՝ մուտ յԱրքայութիւն Տեառն քո”

Աղա Կարապետ Հայրապետեանի հաղախական զործութեարիւնը։

- ա. 1857 թուին ընտրուեցաւ օպնական Քաղաքակլսոյ։
- բ. 1860 – 1867 թիւը կատարեց Քաղաքակլսոյ պաշտօն։
- շ. Սորա արթուն հսկողութեամբ, ի ձեռն Մ. Նալպանտեանի, ստացուեցաւ Հնդակաստանէն, նոր Նախիջնանի կտակած գումարը։
- դ. Սորա առանձին գործակցութեամբ առաջին անգամ բացուեցաւ Նախիջնանի մէջ քաղաքական օրիորդաց դպրոց։
- է. Սորա ժամանակ և սորա գործակցութեամբ հաստատուեցաւ Ն.-Նախիջնանի մէջ վաճառականաց ըլուբ։
- զ. Սորա ժամանակ առաջին անգամ բարուացք արին Ն.-Նախիջնանի գլխաւոր փողոցն, որ տանում է գէպի մերձակայ Ռոստով քաղաքը։

- Աղա Կարապետ Հայրապետեանի զոհաբերութիւնի:
- ա. Տարեկան տուրք 200 մանէթի Թայղանի երեխայոց:
 - բ. Տարեկան տուրք 300 մանէթի Նախիջևանի քաղաքական վարժատան (Սէզդнаго училища).
 - շ. Տարեկան տուրք 150 մանէթի Նախիջևանի ժողովրդական վարժարանին (Приходского училища).
 - դ. Տարեկան տուրք 300 մանէթի Ռոստովի բանտին:
 - է. 1854 թուին իւր հաշով եփել առեց յօդուտ զօրաց 500 պարկ ալիւր և նուիրեց 500 մանէթ:
 - զ. 1855 թուին նուիրեց յօդուտ տնանկաց ըստ գիպաց մարտին 100 մանէթ:
 - ի. 1863 թուին ընծայեց յօդուտ Մոսկվայի կենդանաբանական պարտիզին մի ոնցեղջիւր, որ կասեն, կարժէր 3000—4500 մանէթ, որոց, համար ստացաւ նորին Կայսերական Բարձրութեանն, անկեղծ երախտազիտուրեան՝ հաւաստիքը և ոսկեայ շնորաւ և հրաւիրեցաւ ՚ի նորին Կայսերական Բարձրութեանն Նիկոլայ Նիկոլայեվիչ երեցէն՝ նախաճաշիկ:
 - լ. Իւր հաշով շինեց Ռոստով քաղաքի մէջ ժանդարմ պահակազօրաց համար զինուորանոց և ընծայեց Տէրութեան:
 - թ. ՚ի շինութիւն Ռոստովի մէջ հասարակաց թէտրոնի տուեց փոխարինաբար միանուագ 15000 մանէթ:
 - ժ. Նախիջևանի քաղաքական վարժարանին (նոյնպէս և օրիորդաց վարժարանին) ընծայեց Աղջքանդը Նեվսիի պատկերը և մի որ-

- ծաթեայ կանգեղ ի յիշատակ ազատութեան թագաւոր կայսեր ի մահառիթ վտանգէ ի 4 Եպրիլի 1866 ամի, որոց մասին յայտնեցաւ Հայրապետեանին Նորին Կայսերական Մէծութեան շնորհականութիւնը:
- Ժա Նոյն վարժարանին ընծայեց Թագաւոր Կայսեր կենդանազիք պատկերը ի յիշատակ ազատութեան ստրուկներու:
- Թող այն անհամար մասնաւոր զոհաբերութիւնք, օգնութիւնք և ընծայք, որ լուսահոգի Կարապետ Հայրապետեանը արել է, Քրիստոնի իւրաժին հետամուտ լինելով՝ այնպէս որ ձախ ձեռքը իմացած չէ, ինչ որ աջ ձեռքն է տուել. ասում են, թէ նորա մահուանէ յետ մնացած թղթերու և վկայականների մէջ, գրեթէ պաշտօնական կերպով և հրապարակական կատարած ձախք կայ տուաւել քան թէ 30,000 մանէթի:
-
- Աղա Կարապետ Հայրապետեանի պաշտօնները, աստիանները եւ պաշտուանշանները:
- ա. Պատուանուն Վերատեսուչ Նախիջևանի քաղաքական Վարժատան:
 - բ. Պատուանուն Հոգաբարձու Նախիջևանի ժողովրդական Վարժատան:
 - շ. Պատուանուն անդամ Թայղանի Երեխայոց Ապաւինաբանի, որ է ընդ հովանաւորութեամբ Օգոստավառ Կայսերունուոյն:
 - զ. Ներգործական Անդամ Կենդանաբուծական Ընկերութեան:
 - է. Պատուանուն Վերակացու (Директоръ) Ռոստու Բանտի բաժանման:

զ. Անդամ Գրասենեալի Պետական Դրամատան որ
ի Ռուսով:

է. Պատուանուն Հաշտարար գատաւոր ի Նոր-Նախի-
ջևան: Եւ այլ այսպիսի շատ պաշտօններ, թէ
ժամանակաւոր և թէ ցկեանս, վարել է:

Իւր չերմեռանդութեամբ կատարած պաշտօնների
համար, աղա Կարապետն զանազան ժամանակ արժա-
նացաւ ստանալ ի կողմանէ Ռուսաց և այլ Տէրու-
թեանց յետագայ վարձատրութիւնքն և աստիճանքն՝

1). Նահանգական Առենագլիք (Губернскій секретарь).

2). Պարսից Շահէն «Առիւծի և Արեգակի» պատուա-
նշանը 5 կարգի:

3). Արծաթեայ շքաղրամ (медаль) պարանոցի:

4). Ոսկեայ շքաղրամ (медаль) պարանոցի:

5). Բոօնգեայ շքաղրամ ի յիշատակ մարտին 1853 —
1856 ամի:

6). Բոօնգեայ շքաղրամ Պետերբուրգայ Ակմբանոցի
մասնաժողովէն:

7). Ոսկեայ շքաղրամ ի կենդանաբուծական Ընկե-
րութենէն:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Քր. ԵՊ. Ա. Ղ. Ա. Փ. Ի. Ռ. Ե. Ա. Ն. Ի. ՔԱՐՈԶԸ ԵՒ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹՂԹԵՐ:



ՔՐԻՍՏՈՍԱՍՏԵՐ ԺՈՂԱՎՈՒՐԴ

Այս սուրբ՝ եկեղեցւոյս մէջ հանդերձեալ գոլով այժմ հանգուցեալ կարապետ Աղայի Մարգարեան Հայրապետեան տարելիցի հոգեհանգստեան պաշտօնը կատարել, սոյն առիթով պատշաճ կ'համարիմ մի հոգեոր մտածողութիւն առնել և մեր աչքի ու մտքի առաջը բերել Հանգուցելոյ կեանքը ու կենաց նկարագիրը, յուսալով մի հոգեոր միխթարութիւն և օգտակար խրատ հանել մեր համար:

,Հաւատացի տեսնել զբարութիւն Տեառն յերկրին կենդանեաց ,համբեր Տեառն և քաջալերեաց, դօրասցի սիրտ քո և համբեր Տեառն։ Սաղ. 25 գլ. 14 համ.

Հաստատուն հաւատով հաւատացի, որ մի օր պիտի տեսնեմ Աստուծոյ բարիքը (աղէկութիւնը) հոգւով կենդանիներուն աշխարհի մէջը՝ համբերէ Աստուծուն ու սիրտ ամուրցուի՝ նոր ոյժ թող առնու սիրտ ու համբերութիւնով սպասէ երկնաւոր Տիրոջդ։

Այսպէս կասէ Քրիստոնէի հոգին, այսպէս կ'խօսի իւր Ստեղծողին հետը. Աստուծ իմ, կասէ, որովհետեւ քո հզօր ձևոքիդ օգնականութիւնովը յաղթող մնացի այնքան որոգայթներու և պատերազմներու մէջ, չեմ կարնար համուրուած չը լինել, որ դու վերջապէս քո պարզեներովդ զիս պիտի վարձատրես, պիտի զիս պսակես, այսուհետեւ ամենայն կասկած փարա-

տուած է սրտէս. աղատութեանս ժամանակը կ'մօտենայ՝ բաւական փորձեցիր բու ոտեղծուածիդ թոյլ և տկար լինելը՝ արդէն աներկբայ եմ, որ շուտով միխթարուած կ'լինիմ տեսնելով այն անպատմելի բարիքը և զանձերը, որ՝ կ'սփռես այն սուրբ օթեանի մէջ, այն կենդանեաց երկրին մէջը, ուր որ զիս ձայն պիտի տաս մօտիկներս՝ և ուր որ այնքան անմեղ հոգիներ կ'վայելեն քո շնորհաց աներեսոյթ քաղցրութիւնները, որ չես դադարել տարածել անխնայ նոցա վերայ. Այս երկիրը, ուր որ գեռ ևս կապրիմ ես ակամայ՝ մահու և կորստեան տեղ է. այս երկրի վերայ ծծած օդը ապականուած, թունաւորուած է, և քո ամենակարող զօրութեանդ մի հրաշըն է, որ կը կարնայ փրկել մի հոգի այս ընդհանուր ժանաւախտէն։ Բայց այն սուրբ երկիրը, ուր որ ամենայն ինչ մը մղէ զիս մտնել՝ այն՝ հրեշտակաց փառաբանութեան տեղը, ուր որ կըցանկամ վերջացած տեսնելիմ պանդխտութեան օրերը կենաց և փրկութեան տեղ է, երկնային քաղաքն է, ուր ամենքը միաւորուած են միայն քեզ սիրելու, ուր տեղէն փախած, հեռացած են սուզ և տրամութիւն, ցաւեր ու մաշուցքներ, չարչարանաք ու չարակրութիւններ, վտանգներ ու վախեր՝ ուր որ գու՝ միակ բարին ես, որուն կըցանկան և որն որ ունին, միակ ճշմարտութիւնը, որ կը ճանչընան և կ'սիրեն. միակ երջանկութիւնը, որ մեզ կըսպասէ, և որն ոչ մի բան չի կարնար խել մեզմէն։ Ուրեմն՝ հոգիս, հեռացուը քեզնէ քու վախերդ և քո անցած անհանգստութիւններդ, թէ սրտի անդորրութիւնը, խաղաղութիւնը և ուրախ դէմքը բռնէ այն՝ տակն ու վրայ ըլլալուդ և տեսած փոթորիկներուդ տեղը, որոնք որ մինչեւ այժմ քեզ կնեղէին, թող այն կատած ծովի ալիքները (տալղաները) փրփրին,

բարձրանան, որ կարծես մեզի կուլ տալ կուղեն, չեն կարնար աւելի հեռու երթալ քան թէ մինչի այն տեղը, ուր որ քո Ստեղծող անանցանելի սահմանք է դրել, և գու կ'տեմնես, որ ստքերուդ քովը կ'փշրին, կոչնչանան: Հաստատուն հաւատքնվ, աներկմիտ յուսով և ուրախ սրտով սպասէ Ստեղծողիդ նշանակած ժամին. ամեն օր նորան նորանոր ապացոյցներ տուր քո հաստատ կենալուդ, համբերութիւնդ ու սրտիդ քաջութիւնը՝ սիրտդ թող չի կոտրի, այլ նոր ոյժ թող ստանայ՝ հաստատ կացիր. տար մի քիչ ժամանակ ալ ու զիմացիր փորձանքի և տառապանաց, որ Աստուածդ կամեցել է քեզ իւր զոհը սուրբ և մաքուր անելու համար, որ իրեն աւելի արժանի լինի: Համբերէ նորան քիչ մի ժամանակ ալ՝ ահա կուզայ պսակը ձեռքը որ քեզ բանայ երկնքի գուռը, մացնէ, տանէ, խառնէ քեզ սուրբ հոգիներու երամներուն մէջը, ու դնէ գլուխդ արդարութեան և անմեղութեան սուրբ պսակը՝ ու բոլորովին իրեն նուիրէ, դնէ զըւ լուխդ մարտիրոսութեան պսակը, որով վարձասարէ, պսակէ քեզ այն յաղթութեանդ համար, որ տարար այնքան յարձակմունքի մէջը, որ աշխարհը անդադար կանէր քո վերայ երկնաւոր Տիրոջդ հաւատարիմ և հարազատ միացիր:

Այսպիսի բրիստոնէական զգացմամբք ու համբերութեամբ, Քրիստոսասէր ժողովուրդ, վերջացուց իւր երկրաւոր կեանքը և հեռացաւ աշխարհէս ծառայն Աստուծոյ՝ հանգուցեալ կարապես աղա Մարգարեան Հայրապետեան, որոյ հոգոյ հանգստեան յիշատակը կը կատարենք այսօր՝ միտներս բերելով մեր աղօթքի մէջ նորա հոգուն համար՝ մի տարի անցնելը նորա հեռանալուն վերայ մեզնէ ու այս անցաւոր աշխարհէս, միտներս բերելով մի տարի անցնելը, որ

անցաւ նա անանց կեանքի ճանապարհը: Ասացի, միտներս բերելով մեր աղօթքի մէջ՝ այն, բոլոր այստեղ գտնուած ժողովուրդը՝ հոգիսրականով, աշխարհականով, սրբազնագործ ժամարարի հետ միասին՝ մեր քրիստոնէական սուրբ պարտաւորութեան համեմատ գէալի երկինք հասուցինք և պիտի հասուցանենք մեր աղօթքն ու պաղատանքը՝ արժանացնել մեր մի տարուանէ ի վեր հանգուցելոյ հոգին՝ անանց կենաց, կենդանեաց երկրին, Երկնից արքայութեանն: Այսով կատարած կը լինիմք մեր քրիստոնէական պարտքը՝ մեր հանգուցեալ քրիստոնէաց եղօր դէմ:

Բայց ուրիշ բաներ ալ չըկան արդեօք միտներս բերելու: Միթէ միտներս չենք բերեր միանգամայն և ցաւակցութեամբ՝ որ մէկ տարի անցաւ, որ մէկ յարդելի տարիքը առած մայր, հազուագիւտ որդեսէր և վշամբեր մայր, աշխարհիս չարն ու բարին տեսնելին ետքը իւր միտթարուած կեանքով՝ հանգիստ և ուրախ սրտով անցնելու օրերը՝ սուզ սրտով նստած է, որովնետե իւր արժանաւոր որդու մահը տեսաւ. արդեօք միտներս չենք բերեր, որ մէկ տարի անցաւ, որ իւր կինը կենաց կէս ճանապարհին հասած չըհասած՝ այրիութեան սկ հազուաստների մէջ սեաւորուցաւ և անփարատելի տիրութեան և սզոյ մէջ կանցունէ իւր անմիթար օրերը, որովնետե իւր կեանքի իմաստուն ընկերը հողը զրեց. միտներս չենք բերեր արդեօք, որ մի տարի անցաւ, որ սիրամունդ անմեղ զաւակները իրանց իմաստուն ծնողը կորուցին, իրանց թանկագին հօրէն զրկուեցան, որոյ անփախանակելի խնամոց գեռ ևս շատ կարօտ էին՝ մի տարի անցաւ, որ իւր անդրանիկ զուստը, իւր սակաւօրեայ հարսնութեան առագաստը արտասունքով լուաց, որովնետե ոչ միայն հօրը օրհնութիւնը իւր նոր կե-

նացը համար՝ նորա դառն հիւանդութեան մահիմի
մէջէն ստացաւ, այլ և աղջկանը նոր կեանքին հայ-
ըըն՝ իւր մահովն պատասխանեց: Մի տարի անցաւ,
որ քաղաքէն՝ Քաղաքի Գլուխ մի պալառուցաւ, որ
բաւական տարիներ իւր կեանքը նորա ծառայութեանն
էր նուրիբած՝ անձնաւորութեամբ, և՝ ժամանակի բեր-
մանց ենթարկուելով՝ մէկ կողմանէ՝ մոռացածի պէս
էր իւր տունը, տեղ, գործը, հանգստութիւնը, կեան-
քի վայելմաւնքը, մինչև անգամ իւր զաւակները.....
Մի տարի անցաւ, որ քսան հազարի չափ մի ժողո-
վուրդ բաժնուեցաւ իւր բաղաքական առաջնորդէն,
որ զարդարուած էր խոհեմութեամբ, զգուշաւորու-
թեամբ և զարմանալի համբերութեամբն դժուարատա-
նելի վշտաց, նեղութեանց, փորձանաց և տառապանաց:

Այս, ասոնք ևս միտներս պիտի բերենք ափսո-
սանօք և ցաւակցութեամբ, և նորա անցուցած պաշ-
տօնական կեանքէն և ժամանակի հանգամանքներէն՝
խրատ առնունք մեզ համար՝ խոհեմութիւն, զգուշա-
ւորութիւն, բրիստոնէական համբերութիւն և անձ-
նուրացութիւն: , Յիշատակն արդարոց օրնութեամբ
եղիցի՝ դժպատեն հանգամանքները, անողոքելի ժա-
մանակը՝ ամեն տեղ՝ իւր մարտիրոսներն է ունեցել,
իւր զոհերը պահանջել՝ այդպիսի տխուր յիշատակ
ունեցող՝ ժամանակի և հանգամանաց, դժբաղդաբար,
պատահեցաւ և հանգուցեալն իւր քաղաքագլխութեան
օրօն՝ որպէս և այլ արժանաւոր անձնք, որք ժա-
մանակի և հանգամանաց պայոյտքի մէջ ընկնելով՝
նիւթական և բարոյական անորոգելի կորուստներ
ունեցան՝ իրանք ալ նոյն ժամանակի և հանգամանաց
յորձանքէն՝ հաստաբուն ծառերի նման խլուեցան,
տարուեցան:

Սակայն՝ որչափ ալ անյաջող հանգամանաց և

ժամանակի մէջ հանգուցեալն կատարեց իւր դժուա-
րատանելի ասեմ, քիչ է, այլ՝ անտանելի պաշտօնը
Քաղաքագլխոյ, բայց և այնպէս՝ իւր աճնուէր ծա-
ռայութիւնը՝ ունեցաւ այս իւր ցանկալի և սպասելի
պտուղները, որ իւր օրէն սկսած կ'վայելէ քաղաքը
և պիտի վայելէ անշուշտ շատ և շատ տարիներ և
աւելի ու աւելի լաւ կերպով:

Ամենեցուն յայանի է հանգուցելոյ մեծամեծ
արդիւնք ունեցող կարգութիւններն ու գործերը
տեղոյս ազգայնոց համար, որոց քրիստոնէական,
բարոյական և ազգասիրական մտքով գլխաւորներն
միայն սուրբ պարտք ինձ կը համարեմ յիշել, կեսան-
գրի պաշտօնը վրաս չառնելով:

Հարիւր տարիի մօտ՝ անյիշատակ մոռացութեան
և անինամ դրութեան թողցուած մհծագումար ստակ-
ները Հնդկաստանի՝ իւր օրովը և իւր խոհեմ և արիա-
կան տնօրէնութեամբը կենդանացան Նախիջեանի
համար:

Նորա օրովն էր և հոգացողութեամբն, որ տեղուոյս
ազգայնոց վերանորոգութեան և նոր կեանք ստա-
նալու համար մտածուեցաւ և հոգացողութիւն եղաւ,
այսինքն՝ է՝ պատրաստել տեղս ալ՝ ազգի համար
արժանաւոր մայրեր, որով և պատրաստել տեղս ալ
ազգի համար նոր ապագայ, նոր և ժամանակակից
սերունդ՝ ժամանակի պահանջմանցը համաձայն, որով
և առաջին քայլն արաւ քաղաքը՝ դուրս ելլելով, ազա-
տուելով այն անդունդքէն, որոյ մէջը ընկած, խորա-
սուզած մնալով՝ պիտի մնար աղիտութեան անլոյս,
կորստական և խոր խաւարի մէջ ծածկուած՝ խօսքս
աղջկանց գլորոցի վերայ է, որ քաղաքացին, աներկ-
բայ եմ՝ որ մօտիկ ժամանակներս զիմնապիօնի ուսու-
մին ալ կը բարձրացնէ:

Նորա օրովմ էր՝ անշուշտ. և մասնակցութեամբ,
որ տեղւոյս աղքատաց, այրեաց և որբոց օգնականու-
թեան և ինսամարկութեան՝ ուղղակի և անուղղակի՝
կահոնաւոր և զօրաւոր գարկ և ընթացք արուեցաւ,
որոնց՝ իւրեանց բաղդին հասուց, որոնց՝ ապրուսախ,
որոնց՝ ամուսնական կեանքի արժանացուց, որոնց
համար ալ՝ ուսման, յառաջադիմութեան, ապա և
վայելուչ ու ապահով կենցաղավարութեան ճանա-
պարհ բացեց, ստորին կարգի ժողովրդոց զաւակ-
ները հանելով և ոտքի կանգնեցնելով իւրեանց ըն-
կած, կործանած դրութենէն և բարեկեցիկ գասին
բարձրացնելով ու խառնելով մանաւանդ կանանց սե-
ռը, որ այստեղ ևս գեռ անուշաղբութեան, եթէ ոչ
անարգութեան և անազատութեան մէջ կը տառապի:
Խօսք՝ Բարեկործական Ընկերութեան վերայ է, որ
քանի կերթայ՝ կ'զօրանայ նաև բարեպաշտ անձանց
կտակներով ու նուիրաբերութիւններով:

Կ'թողում ասել միւս մանր ու խոշոր արդիւնա-
ւոր գործերը, կարգադրութիւնները, նշանաւոր ծա-
ռայութիւնները հաղուցելոյ՝ իբրև Քաղաքազլիի՝ թէ
քաղաքացւոց և թէ գիւղացւոց համար, որոնք նրա
պաշտօնակատարութեան անուրանալի արդիւնքներն
են, թէն բազմավիշտ և բազմավրդով կենացն ու ժա-
մանակի արդասիքը:

Չեմ կարող մոռանալ և նորա հոգւոյ միւս գո-
վելի յատկութիւնները, որոնք որչափ որ սիրելի՝
նոյնչափ և յարգելի էին ժողովրդեան աչքին. նորա
ընաւորութեան բաղցրութիւնը, բաղաքավարութիւնը
և բաւական յաջողակութիւն աղքային և ոռւսաց
լեզուաց մէջ, որով նոյնպէս՝ իշխան մարդոց կարգէն
զգալի կերպով կ'զատուէր և բարձր կ'տեմուէր:

Ասածներս և ասելիքներս ընաւ չեմ կարծեր,

որ և իցէ մարդու այլապէս երկնայ, անոր համար
որ հանգուցեան՝ արդէն ներկայացած է Աստուծոյ
Ատենի առաջը՝ ընդունելու իւր գործոց հատուցումն
արդար Դատաւորէն մեր ամենեցուն: Ասկէ զատ՝ իմ
խօսած՝ հանգուցելոյ կենաց և գործոց վրայ իսկ
այն է, ինչ որ տեսածս և լսածս է. , , զոր ինչ լսեմ՝
զատեմ: Սյլ որ առաւենի է հանգուցելոյն արժա-
նաւորութիւնը յիշելը, բացի մէկ հոգեոր մխիթա-
րութիւն լինելէն իւր ընտանեաց և աղդականաց և
բարի օրինակ և քաջակերսւթիւն իւր զաւակաց՝ ունի
և այն գեղեցիկ և խորհրդաւոր միավն ալ՝ որ զօրա-
ւոր և ազգու մէկ խթան է քրիստոնեայ մարդու մը
համար՝ աւելի գերազանց բարի գործեր և առարի-
նութիւններ ունենալու և իրմէ ետքը թողցնելու՝
մտածելով իւր կեանքի և այս աշխարհիս կարճատ
և անցաւոր լինելը, որոյ մէջ միմիայն առաքինու-
թիւնը, բարի և ասաւածահաճոյ գործերը կարնան
անմոռաց և անջնջելի մնալ՝ ոչ միայն ազգային տե-
ղական պատմութեան մէջ, այլ և որ առաւել թան-
կագինն է՝ մնացողաց և յետագայից ևս սրտին և
մտքին մէջ՝ երկար ժամանակներով, որով՝ մարտնով
մեռնելէն ետքն ալ՝ իւր առաքինութիւններովը ու բա-
րի գործերով՝ այս աշխարհիս մէջը երկար գեռ ևս
ողջ կ'մնայ, մինչդեռ շատ և շատ կենդանի մար-
դիկ՝ զուրկ լինելով նորա բարեմասնութիւններէն՝
կամ չ'կարենալով, կամ չ'կամենալով ունենալ մար-
դակերպ և ոչ բանական կենդանեաց կարգը կ'հա-
մարուին:

Խօսք վերջացնելու մտքով՝ հանգուցելոյ վերայ
դարձնեմ:

Բայց Քաղաքավլանութեան բազմամեայ պաշտօնը,
իւր քաշածտառապանքներն ու զրկանքները այնպիսի

ծանր վէրքեր դրին հաճգուցելոյ սրտին մէջը,
որ թունաւորեցին նորա կեանքը և կենաց քաղցրու-
թիւնը, պատճառեցին բարոյական յոգնածութիւն,
երկարատե, անտանելի հիւանդութիւն, որով և ժա-
մանակէ յառաջ իջուցին գերեզման։ Հաճգուցեալն
քաղաքավլխութենէն ենէլէն ետքը՝ իւր անցուցած
կեանքովը կարծես թէ Սաղմոսերգուի հետ ինքն ալ
կասէր. „Թոյլ արա ինձ զի հաճգեայց, մինչչե եր-
թեալ իցեմ և այլ ոչ ևս գտանիցիմ։ թող տուր քիչ
մը հաճգչիմ, ուհաթլամիշ ըլամ, քանի որ գնացած
չեմ։ Ալ մասնակցութիւն չունէր նա ոչ մի քաղա-
քական գործի՝ տունը նստած, փակուած կետնք կան-
ցուցանէր՝ կարծես համարումը կորուցել էր այս աշ-
խարհիս վերայ, աշխարհիս փառքի, պատիւի, պաշտօն-
ներու, իշխանութեան վերայ, վայելչութեան, հարլո-
տութեան, ուրախութեան վերայ՝ կարծես թէ ալ չէր
հաւատար այս աշխարհիս պարգևած և ոչ մի բարեա-
ցըն ու բարութեացն, այլ կ'հաւատար միայն երկնաւոր
պարգևաց, բարեանց և բարութեանց որոց և միայն կը
փափաքէր՝ ցաւած ու լիքն սրտով այս ցաւալից աշխար-
հէս ունորա փորձանքներէն կարծես թէ Սաղմոսերգուի
նման այս կասէր տնձկանօք. „հաւատացի տեսա-
նել. „հաւատացի հաստատ հաւատով, որ մի օր
պիտի տեսնեմ՝ ոչ թէ այս բազմավիշտ աշխարհիս՝
այլ Աստուծոյ բարիքը՝ կենդանեաց երկրին մէջ,
երկնային գաւառին մէջ, ուր տեղ որ սրբոց ժողով-
ները՝ խաղաղութեան մէջ՝ կ'վայելեն անոնց և յա-
փիտենական կեանքն ու բարիքն՝ արժանացած աս-
տուածային տեսոյն և ժառանգած երկնքի խորան-
ները։ Ասոր համար ալ սիրով կ'ատանէր ու կդիմա-
նար նաև վերջին անտանելի նեղութեանցն ու չար-
չարանացն՝ ինքն իրեն ասելով թէ. „համբեր Տեա-

ոըն և քաջալերեաց՝ զօրացի սիրտ քո և համբեր
Տեառն։

Հանգիստ նորա հոգւոյն և խաղաղութիւն յաւի-
տենական, որ ընկաւ, գնաց իւր ցանկացած ճանա-
պարհն խաղաղութեան՝ Հոգւոյն Սրբոյ մխիթարու-
թիւնն նորա պատկառելի մօր և այրիացեալ կենակցի
սրտին, աստուածային օրնութիւնն և շնորհ՝ նորա
զաւակաց վերայ, որ արժանաւոր լինին իւրեանց
արժանաւոր հօրն։

Իսկ մեղ, քրիստոսասէր ժողովուրդ, խրատ և
օրինակ լինի նորա դժուարին կեանքը, նորա տա-
ժանելի պաշտօնը և արդիւնաւոր գործերը՝ գժբաղդ
ժամանակի հանգամանաց և բերմանց մէջ։ Զը մոռ-
նանք, որ մեր կեանքը խորհուրդ ունի և վերջ-
ամենքիս շահը՝ հասարակաց շահին մէջ տեսնենք.
աշխարհիս մէջ՝ ոչ կորստական մամօնայի հարստու-
թիւնը միայն՝ ունենանք և թողունք, այլ՝ առաքինու-
թեան և բարի գործոց հասարակօգուտ հարստութիւնը:
Ժամանակի վնասակար ընթացքին առաջքը առնունք
հեռատեսութեամբ՝ ժամանակէն հասարակաց և ոչ
անձնական օգուտը քաղել միայն նայենք։ Կուսակցու-
թեան հոգին՝ որչափ ալ հարկաւոր համարուի բա-
ղաքի յառաջաղիմութեան համար – այն հոգին, որով
տարբեր գաղափարներով ու ճանապարհներով, տար-
բեր ներգործութիւնով ու գործունէութիւնով,
զսնազան խումբերը մտաց կ'ջանան, կ'ճգնին՝ միա-
սիրտ և միհոգի զարգացնել ժողովուրդը, յառաջ տա-
նել երկրի մը այլ և այլ բարեաց մասանց մէջ – այն
հոգին թող լուսաւորուած զօրացած լինի, ինչպէս
եւրոպացւոց մէջ է շատ և շատ տեղեր՝ ողջամիտ,
ազնիւ և օգտակար դասողութիւններով ու ձգտումնե-
րով՝ հասարակի բազմակողմանի բարօրութիւնը ունե-

նայ իրեն նպատակ և ոչ թէ կարճատեսութեամբ
մթագնաց և պղտոր մտքերով՝ անձնասիրութեան և
անձնական շահուց և նպատակաց կէտը, զո՞ն բերե-
լով ընդհանուրի բարեկեցութիւնը և հսնգուտութիւնը,
նոցա հաւատարմութիւնը, հնազանդութիւնը և պարզ
սիրով:

Ամենաբարին Աստուած լուսաւորէ հանգուցե-
լոյն հոգին, լուսաւորէ և մեր միտքը, որ ճանչնանք
թէ ի՞նչ է բարին, հաճոյն և կատարեալն Աստուծոյ
առաջը և հասարակի բարօրութեան համար։ Ամէն։

Գրիգոր Եպիսկոպոս Աղափիրեան.

1874 թ. յունիարի 31.

Նոր-Նախիջեան։

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ

Մե՛ք Աղեխանոյր Երկրորդ Կայու եւ Ինժնակալ Հա-
մայն Ռուսաց եւ աղմ, եւ աղմ, ու աղմ։

Ծանուցադրով (Մանիքէստիւ) որ, ի 10 Ապրիլի
1852 ամի կարգադրեալ էր դասակարգ Պատուանուն
քաղաքացեաց, 'ի վերայ իրաւանց 'ի նոյն գծագրե-
լոց։ Այլ զի Մեր հաւատարիմ հակատակ Նախիջեանու
առաջին աստիճանի վաճառականուիի այրի Հեղինէ
Հայրապետեանն յանդիման կացուցեալ թղթովք
իւրովք հաստատեաց զիրաւունս առ տոհմական պա-
տուանուն քաղաքացիութիւն, վասն որոյ ամբառնալով
զյիշեալ Նախիջեանու առաջին կարգի վաճառականունի
զայրի Հեղինէն Հայրապետեան հանդերձ զաւակօք
նորին, որդւովքն, որք են ա. Կարապես, կին նորա
Բերտարէ Ստեփանէնեան և զաւակը նոցա, որդին Յա-
րուրին և զստերք Թագունիի և Նոյելզար Կարապետեան,
և թ. Մկրտիչ Մարգարեան, —'ի դասակարգ պատուա-
նուն քաղաքացեաց, Ամենասողորմածաբար հրամայեմք,
զի որպէս այրի Հեղինէն նոյնպէս և ժառանձնաշնոր-
հութիւնս, որ ինչ շնորհեալ են մանիքէստիւ այսմ
դասակարգի։ 'ի վկայութիւն որոյ հարմայեցաք Մեք
Կառավարող Ծերակուտին (Սենաթին) զայս արտօնագիր
ստորագրել և Արքունուկան Մեր կնքով Վաւերացու-
ցանել։ Տուաւ ի Ս. Պետերբուրգ, ի 11 յուլիսի
1857 ամի։

Ն Ո Ր Ի Ն
ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ
— Ի Լ Ի Ն Ե Լ Ն Ի Կ Ր
'ի Գեղարքունի (Царское село)
'ի 30 Յունիսի 1862 ամի.

Հ Ա Ռ Ե Ց Ա Ի Ժ Ը Հ

'ի Նախարարութեան Ազգային Լուսաւորութեան
զ հ ե ս ե ւ ե ա լ հ ր ա մ ա ն

Ռ Շ Ա Վ Ա Կ Կ

Տոհմական Պատուանուն Քաղաքացի Հայրապե-
տեան — ոչ յօրինակ այլոց 'ի պատճառս առանձին
դրութեան Նախիջևանի նահանգական վարժարանին —
պատուանուն տեսուչ այսր վարժատան:

Ստորագրեալ է Կառավարիչ Նախարարութեան
Ստատու. Սեքրեթար՝ Գօղովին:

Նախիջեն անու Քաղաքացինոյ առաջին կարգի վա-
ճառականի եւ Տնհմական Պատուանուն Քաղա-
յացոյ Կարապետի Մարզարեան Հայրապետեան:

Զգայակցելով օգտաւէտ նպատակաց Ժողովոյն
Աքըլիմատիզացիայի, գտանելոյ ընդ իմով հովանաւո-
րութեամբ, Դուք ոչ խնայելով վասն օգտի հասարա-
կաց 'ի սեպհական ծախս Զեր մատուցիք ի նուէր
կենդանաբանական պարտիզին որ ի Մոսկուա գհնդկա-
կան ոնցեղջիւրն, զբերեալն ի Կալկաթայէ: Կևդանիս
այս հազուազիւտ յոյժ գոլով յեւրոպա, անդին և պա-
տուական գիւտ է ըստ գիտնական մասին վասն նո-
րոյ հաստատաթեան, ոյը վասն քաղցր պարտ համա-
րիմ, վասն ջերմեռանդ նուիրաբերութեանդ, յայտ-
նել ձեզ Զիւմ անկեղծ շնորհակալութիւն և բարեհա-
ճութիւն, ի նշան որոց ես առաջարկեցի Ժողովոյ
ընտրել զԶեզ ներգործական Անդամ:

Մնաւ Զեզ բարեացակաւ Ն Ի Ո Լ Ա Յ.

Ի 12 Յուլիսի
1863 ամի.

Դ Ր Ա Ն

Կ Ա Յ Ո Ւ Ե Ա Ն Տ Ե Ր Ո Ւ Թ Ե Վ Ե Ն

Թ Ա Գ Ա Տ Ո Ր Ի

(Մեծի Խ շ ա ն ի բ

Ն Ի Կ Ո Ւ Ա Յ Ն Ի Կ Ո Ւ Ա Յ Ե Վ Ի Չ Ի

Ե Ր Ի Ց Ո Ւ

Կ մ ա ս ի ն Պ ա լ ա ս ա լ ե ս ո ւ թ ե ա ն

Դ Ս Պ Ե Տ Ե Ր Բ Ո Ւ Ի Բ Գ

Դ պ է տ ի Մ ա ր զ ա ր ե ա ն Հ ա յ ր ա -

ի Հ ո կ տ ե մ բ ե ր ի 27 1864 ամի պ է տ ե ա ն :

№ 986.

Ըստ հ ր ա մ ա ն ի Թ ա գ ա ւ ո ր ի Մ ե ծ ի
Ի շ ա ն ի Ն ի կ ո ղ ա յ ի Ն ի կ ո ղ ա յ ե լ ի յ ի ե ր ի -
ց ու ՝ պ ա շ տ պ ա ն ի Կ ա յ ս ե ր ա կ ա ն Հ ն կ ի -
ը ո ւ թ ե ա ն Ա ր ք լ ի մ ա տ ի կ ա ց ի ա յ ի , և ի
լ ր ո ւ մ ն գ ր ո ւ թ ե ա ն (ր է շ ր ի պ տ) Ն ո ր ի ն
Կ ա յ ս ե ր ա կ ա ն Բ ա ր ձ ր ո ւ թ ե ա ն յ ա ն ո ւ ն
Զ ե ր , ո ր ի 12-է ն յ ո ւ լ ի ս ի 1863 ամի ,
ո ւ ն ի մ պ ա տ ի ւ ա ռ ա ք ե լ ը ն դ ս մ ի ն զ ո ւ -
կ ե ա յ շ ք ա ղ բ ա մ (մ ե տ ա լ) , գ ո ր Հ ն կ ե -
ր ո ւ թ ի ւ ն ա ր ժ ա ն ի դ ա տ ե ա լ է Զ ե զ վ ա ս ն
ը ն ծ ա յ ե լ ո յ Զ ե ր յ օ գ ո ւ տ Կ ա յ ս ե ր ա կ ա ն
կ ե ն դ ա ն ա բ ա ն ա կ ա ն պ ա ր տ ի զ ի ն զ հ ն դ լ ա -
կ ա ն ս ն դ ե ղ ի ւ ր ն :

Կ ե ն ե ր ա յ Ա ս ս ի ր ա մ ն դ (օ ժ ա ն դ ա կ զ օ ր ա պ ե ս) Պ ա ր ո ն Ք ո ր ծ .

Զ ե ռ ա մ ի Շ ո ր ի ն Մ ե ծ ո ւ թ ե ա ն Շ ա հ ի ն Պ ա ր ս ի ց գ ր ե ա լ
է ո ւ կ ե ն ի շ տ ա յ ի ւ , ե ղ ի ց ի լ ո ւ ս ա յ ս ա յ ս ւ :

Ա ր ք ա յ ո ւ թ ի ւ ն Ա մ ե ն ա կ ա ր ո ղ ի ն Ա ս տ ո ւ ծ ո յ և մ ի ա -
պ ե տ ա կ ա ն հ ր ա մ ա ն , ը ս տ մ ե ր Ա ր ք ա յ ա կ ա ն ո ղ ո ր -
մ ո ւ թ ե ա ն , Ն ա խ ի ջ ե ա ն ո ւ վ ա ճ ա ռ ա կ ա ն ի և պ ա տ ո ւ ա -
ն ո ւ ն ք ա ղ ա ք ա ց ւ ո յ Կ ա ր ա պ ե ս Հ ա յ ր ա պ ե տ ե ա ն , ո ր ո վ -
հ ե տ ե ն ա ս ը ս տ ա կ ա ն գ ո ր ծ ո ց ց ո ւ ց ե ա լ է
մ ի շ տ պ ի ւ յ ե ր մ ե ռ ա ն ո ղ ո ւ թ ի ւ ն , ո ր ե հ ա ս յ ո ւ ն կ ս Մ ե -
ր ո յ Ա ր ք ա յ ա կ ա ն ո ղ ո ր մ ո ւ թ ե ա ն , յ ա յ ն ս ա կ ս և պ ա ր -
դ ե մ ը ն մ ա զ ք ա ն շ ա ն Ա ո խ ւ ծ ո յ և Ա ր ե զ ա կ ա ն 5-կ ա ր -
դ ի վ ա ս ն կ ր ե լ ո յ ի լ ա ն ջ ի , ի վ ա ր ձ ա տ ր ո ւ թ ի ւ ն ն ո ր ա ,
և ս ո ւ ր բ հ ա մ ա ր ե լ զ ա յ ս : ի 20 Ա մ ս ե ա ն Ռ ա բ ի ս ի ն ի
1277 ա մ ի (ա յ ս ի ն ք ն ի 24 հ ո կ տ ե մ բ ե ր ի 1860 ա մ ի):

ի մ ի ւ ս կ ո ղ մ ն ե ղ ե ա լ ե ն ի հ ա ս տ ա տ ո ւ թ ի ւ ն ե ր -
կ ո ւ ա ն ո ւ ա ն ա կ ա ն կ ն ի ք ք Ն ա խ ա ր ա ր ի ն օ տ ա ր ա զ գ ի
գ ո ր ծ ո ց Պ ա ր ս ի ց Դ ր ա ն Մ ի ր զ ա ս է ի թ ի ւ ն :

Ա. ՊԵՏԵՐԲՈՒՀՊԳԵԱՆ

ԺՈՂՈՎ ԱԿՄԲԱՆՈՑԻ

'h 26 Phœnix 1860 msh

U-n wurnā kurwulis ur-

La fin de l'empereur

qurkuuli Σωγρουγκιστουλι:

Թագաւոր Կայսր, ըստ գեկուց-
ման Նախարարին Արքունի գանձուց,
Բարձրագոյն բարեհաճեց հրամայել
բաշխել զոլտորաստեալ ըստ կարգա-
դրութեան ժողովոյն Ակմբանոցի, ըզ-
պլօնդեայ շքաղբամս (մետալս) ան-
ձանց, որք մասնակցեալ են առ ի կազ-
մել զդրամագլուխ ի շինութիւն ի գահ-
լիձի Ակմբանոցի արձանին ի Տէր համ-
գուցելոյ Կայսեր Նիկողայի Առաջնոյ:

Եւ որովհետեւ հանդէս բացման
արձանին կատարեցաւ ի 27 դեկտ.
1859 ամի, յայն սակա Ժողովը Ակմ-
բանոցին ունի պատիւ առաքել ընդ-
սմին առ Զեզ, Ողորմած Տէր, որպէս
առ մասնակից նուիրաբերութեան, ըզ-
պրօնդեայ շքաղրամ։



Økr Ulphuusingh uget fuu liηr Ør uγ



15828